Ռամիկները
կոլխոզամուտ եւ դաշտի
աշխատանք

Գ(Հ7 926)
Գ-42

191

19 AUG 2006
19 AUG 2011

# ՏԱՃԻԿՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ
ԵՒ
# ԲԱԳՈՒԻ ԱՆԿՈՒՄԸ

*«Ոչ ի կարծ ընդոստուցեալ, և ոչ լուրճարթուցեալ, այլ ես անձամբ անձին պատահեցի ի փեղւոյն և տեսի»:*

Եղիշէ.

Գ Ր Ե Ց
ԵՂԻՇԷ Ա. ՔԱՀ. ԳԵՂԱՄԵԱՆՑ

Գ Ր Ա Կ Ա Ճ Ա Ռ Ի Ն
ԲԱԳՈՒ
Տպարան Արշակ Ի. Կարապետեանց
1919

7/XI – 1922

4 5247- 73

# ՏԱՃԿԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ

Հայկական հարցին նուիրուած իմ վերջին պրակում՝ ես ցոյց տուի թէ որպիսի՜ և որքան զոհողութիւնների և տառապանքների ենթարկեց Տաճկահայ ժողովուրդը՝ իր բազմաթիւ գրական, գիտնական և քաղաքական աշխարհիկ և հոգևոր յայտնի գործիչներով՝ թէ իր հայրենիքում, թէ Միջագետքում, թէ Պարսկաստանում և թէ Անդրկովկասում ներկայ համաշխարհային պատերազմի հէնց առաջին և երկրորդ տարիներում։

Տաճկահայութեան այդ դարհուրելի դրութեամբ՝ հայ քաղաքական գործիչների և նրանց պարագլուխ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան երեսնամեայ գործունէութիւնը՝ պսակւեց այդ ժողովրդի վրայ դրուած մի մեծ սև խաչով, որի հանդէպ բանաստեղծը ծունկ չոքած՝ կորագլուխ սկսեց «Հոգեհանգստի» աղօթքը մրմնջալ՝

«Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նման,
Կանչեցի թշւառ են հոգիներին՝ ցրւած յաւիտեան
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև ծովն Հայոց,
Մինչև Հելլեսպոնդ, մինչև Պոնտոսի ափերն ալէկոծ,
Հանգէք իմ որբեր, իզուր են յուզմունք, իզուր և աննշան
Մարդակեր գազան մարդը դեռ երկար էապէս կը մնայ»։

Իսկ ինչ վերաբերում է այդ նահատակուած ժողովրդի

հայրենիքին՝ այնտեղ՝

«Ծուխ է բաձրանում Մուշի հովիտից,
Ծուխ է բարձրանում Սասնայ սարերից.
Ծուխ է բարձրանում Վանայ կողմերից,
Ծուխ է բարձրանում Աբաղայ դաշտից,
Կրակ է կանգնած Զէյթունի վրայ...» (*)

## ՌՈՒՍ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԽԱՂԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան այս վերջին գործունէութիւնը, ուր ուրեմն ի կատար ածեց ռուսական քաղաքականութեան դարաւոր ծրագիրը,—Տաճկահայաստանի դատարկումը հայերից և նրա կցումը Ռուսիային։

Բագրևանդը, Վասպուրականը, բարձր Հայքը և Տարօնը՝ իրենց գլխաւոր մասերում՝ ռուսների ձեռքն անցնելուց յետոյ՝ այլ ևս կարիք չկար այդ կողմերում պահելու հայ կամաւորական խմբերն, որոց ուղղակի և անուղղակի աջակցութեամբ՝ ռուսական բանակը տէր էր դարձել նոյն վայրերին։—

Հայ կամաւորական խմբերի նոյն վայրերում մնալն՝ կարող էր աւելորդ գլխացաւանք պատճառել ռուսական իշխանութեանը, որի Կովկասի ներկայացուցիչ՝ դուքս Վարանցով-

*) Յով. Թումանեանի «Հայրենիքի հետ» ժողովածուից։



Դաշկով փոխարքան՝ 1914 թւին, զանազան ստախօսական խոստումներով, խելքից հանել, յիմարացրել էր յիշեալ խմբերին, երբ նրանց կազմակերպում և զինական ու դրամական օժանդակութիւն տալով՝ ճանապարհ էր ձգում դէպի Տաճկահայաստան։

Ուստի այդ գլխացաւանքից ազատուելու համար՝ ռուսական դիպլոմատիան կարգադրեց՝ կամաւորական խմբերից հայ վեց հրացանաձիգ վաշտ (армянскіе стрѣлковые баталіоны) կազմելով՝ ցրուել արևմտեան ռազմաբեմում, մինչև իսկ հեռաւոր Սիբիրում։

Դիւանագիտական այս խաղը՝ անմիջապէս և ամենախաղաղ կերպով կատարւեց։ Նրա միտքը չ՚ըմբռնեցին հայ դիւանագէտներն և շարունակեցին իրանց ցնորամիտ օրօրմունքներն։

Եւ իրենց հետ սկսեցին օրօրել նա և միամիտ հայ ժողովրդին։

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՋՈՋԵՐԻ ՀԻՆ ԵՐԳԸ.

Այս բանում ևս, ինչ ասել կուզի, պարագլուխ հանդիսացան դաշնակցական ջոջերն։

Դրանցից մինը՝ Աւետիս Ահարօնեանը. որ ամենից լեզուանին է խօսելու ու գրելու մէջ, ամէնից ընդունակն ու շնորհալին, 1915 թ.

Բագու գալով Ապրիլի 1-ին (մարդկանց խաբելու օրն) քաղաքային ժողովարանում մի դասախօսութիւն կարդաց, որով զանազան սոփեստութիւններից յետոյ՝ գովում ու գովաբանում էր հայ «ռազմիկ ազգը», յորդորելով ունկնդիրներին Տաճկահայաստանում տեղի ունեցած կոտորածներից չյուսահատուելով՝ շարունակել կռիւը։

Ահարօնեանից փոքր ինչ առաջ՝ մի այլ դաշնակցական ջոջ, Սիմէօն Յակոբեան՝ իր խմբագրած «Արև» թերթում գրում էր, որ եթէ Տաճկահայաստանում միմիայն մի տուն մնայ և նրա երդկից ծուխ բարձրանայ՝ այդ տան եղողները դարձեալ պիտի շարունակեն կռուել։—

Ահարօնեանի դասախօսութեան առթիւ գրածս երկտողում ես ասում էի այն ժամանակ, որ եթէ ռուսահայերը այսուհետև էլ դաշնակցական ջոջերի խորհրդին անսալով նրանց հետևին, ուրեմն Տաճկահայերի օրերին հասնելու հերթը՝ իրենց է գալու» (*)

## ՌՈՒՍ ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

Տաճկահայաստանի վերոյիշեալ մասերին

*) «Հովիտ» 1915 № 231



տիրելուց յետոյ՝ ռուսական դիւանագիտութիւնը համոզուած էր, որ այդ վայրերն այլ ևս իր ձեռքից դուրս գալու չեն։ Այդ համոզման հիմքը կազմում էին պատերազմից առաջ դաշնակից պետութիւնների մէջ եղած գաղտնի դաշնագիրն, որոց զօրութեամբ Տաճկահայաստանի այդ վայրերն, արդարև, մնալու էին Ռուսիային և սա արդէն կազմ ու պատրաստ ունէր այդ տեղերն ռուս գաղթականներով լցնելու ծրագիրը որը իրագործելու ձեռնարկեց գեն. Իւդենիչը։

Սակայն ռուսական դիպլոմատիայի հաշիւը— սխալ դուրս եկաւ։ 1917 թւի փետրուարեան յեղափոխութիւնը յանկարծակի վրայ գալով՝ միապետական դիպլոմատիայի հետ՝ միապետական իշխանութիւնն ևս գլխի վայր տապալեց։

Եթէ Տաճկահայաստանի ազատութեան համար տասնեակ տարիներ, ճակատն ի քիրտ, աշխատող Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարներն եւրոպական, և մանաւ. որպէս ռուսական դիւանագիտութեան ոգւոյն և նպատակին, նմանապէս և Տաճկահայաստանի ու Տաճկահայերի վիճակին ծանօթ լինէին, նրանք պիտի իմանային, որ 200 տարուց ի վեր մեզ տաճիկներին հետ կուացնողը, մեզ իր ձեռին կոյր գործիք շինողը՝ ռուսական միապետութիւնն է,—ապաքէն նրանք պիտի ըմբռնէին և կուսակցութեանն էլ ըմ-

բանելայլին, որ ռուս միապետութեան տապալումը՝ ամենայարմար առիթ էր ընծայում Հայերին՝ Օսմանեան իշխանութեանը հաշտութեան և բարեկամութեան ձեռք մեկնելով, փրկելու հայութեան մնացորդը և նրա ապագան կարգաւորելու, ընդ գերիշխանութեամբ Օսմանեան իշխանութեան, մի լոզունգ որ վաղուցենի մտած էր Դաշնակցութեան հիմնական ծրագրի մէջ։

Այս բանի համար՝ Դաշնակցութիւնը ոչ մի արգելքի չէր կարող հանդիպել Օսմանեան կառավարութեան կողմից, որի ծրագրում միշտ գերիշխող է եղել այն միտքը, թէ հայերին ինքնավարութիւն տալով՝ պէտք է մի բուֆեր իշխանութիւն կազմել Ռուսիայի և Տաճկաստանի մէջ։ Բայց Տաճկական այդ ծրագիրներն շարունակ խափանել, քանդել է Եւրոպան, և մանաւորապէս Ռուսիան, որ Տաճկահայերի ազատութեան պատրւակի տակ՝ միշտ և հանապազ իր աշխարհակալական ծրագիրն է առաջ տարել, և հայերին շարունակ խաբել։

## ԽԵԼԻՆ ԽՐԱՏԸ, ՍԵՒԻՆ ՍԱՊՈՆԸ ՉԻ ՕԳՆԵԼ.

Դժբաղդաբար Հ. Յ. Դաշնակցութեան մէջ պատմութեան ծանօթ, և փոքր ի շատէ քաղաքական հասունութիւն ունեցող մարդ չգան-



ւեց, որ կուսակցութեան սխալ ընթացքն ըմբռնելու, ընդունելու և խոստովանելու առաքինութիւնը ունենար իր ժամանակին, այլ ոչ յետոյ, ինչպէս արաւ Բաթումից Պոլիս մեկնող նոյն դաշնակցութեան պատգամաւորութիւնը, որի նախագահ Աւետիս Ահարոնեանը այս խօսքերով էր դիմում իրան դիմող մի թերթի աշխատակցին՝ «Եւրոպական պետութիւնների պաշտպանութիւնը մեզ վրայ շատ սուղ նստեց։ Նրանցից մենք այժմ ոչ մի օգնութիւն չենք սպասում։ Մեր նպատակն է ազատել և փրկել Կովկասի հայութիւնը, որ կախուած է միմիայն թուրքերից. որին մենք խոստովանեցինք մեր գործած սխալները եւ վստահ ենք նրա ներողամտութեան ու բարեկամութեան վրայ» (*)

Ասած է «խելին խրատը՝ սեւին սապոնը» չի օգնել։

Ռուս միապետութեան տապալումից յետոյ էլ՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը մնաց միևնոյն իշխանութեան ծրագրի հլու հպատակը և գործադրողը։ Ըստ սովորականին ներշնչուելով այս

*) «Каспій» 1916 № 71: Եթէ ընդունենք անգամ, որ Ահարոնեանի խօսքերն ճիշտ չեն դուրս բերուած,—այնու ամենայնիւ Դաշնակցական պատգամաւորութեան Պոլիս գնալը՝ հէնց բաւական է մեր միտքը հաստատելու։

անգամ ռուսական նոր իշխանութիւնից ու Լըադրութիւնից,— Դաշնակցութիւնը շարունակեց հայ անգիտակից զանգուածի մէջ թիւրքատեցութեան զգացմունք, ըստ սովորութեան, գրգռել ու արծարծել, և դարաւոր հարևանների մէջ. ցարիզմի շնորհիւ, արուեստականօրէն լարուած թշնամական մթնոլորտը աւելի խորացնել, աւելի գունաւորել. տաճկական օրիանտացիայի նոյն իսկ առաւելութիւնները խեղաթիւրելով ու ժխտելով, և ռուսական օրիանտացիայի՝ նոյն իսկ չունեցած առաւելութիւններ հնարելով։ Ուստի և հրապարակ եկաւ Թիֆլիսում և Բագւում՝ նորանոր կամաւորական խմբեր պատրաստելու՝ այս անգամ արդէն ռուս յեղափոխական իշխանութեան— նախ՝ Կերենսկու և ապա՝ Լենինի թելադրութեամբ։

Ահա թէ ինչպէս։

## ԳԵՆԵՐԱԼ ՌԱԴՐԱՏՈՒՆԻ

Յեղափոխական իշխանութեան ղեկավար Կերենսկու ազատամտութիւնը՝ իսկապէս ազատ անմտութիւն էր։ Ռուս ազգի համակրութիւնը մէկ գլուխ գրաւելու նպատակով նա այնպիսի դեկրետներ հրատարակեց, որոնք իրանց ազատամտութեան կողմից դեռ նմանը չունէին՝



երկրագնդիս նոյն իսկ ամենալուսաւորեալ ազգերից մէկի կամ միւսի մէջ։—

Այդ դեկրետների շնորհիւ՝ կազմալուծուեց ու քայքայուեց ռուս բանակը ինչպէս արևելեան, նոյնպէս և արևմտեան ճակատներում։

Դաժան ցարիզմի դաժան ռեժիմի տակ ստրկաբար գործող ռուս զինուորը՝ նոր կարգերի ազդեցութեան տակ, բարոյական արբեցութեան ենթարկուեց և թքնելով ամեն բանի վրայ՝ թողեց պատերազմի դաշտն և խումբ խումբ վերադարձաւ իր հայրենիքը,—Ռուսաստան։—

Գերմանիային և Տաճկաստանին էլ՝ հէնց այդ էր հարկաւոր։ Ուստի նրանք այժմ աւելի արագացրին իրանց առաջխաղացումը։—

Կերենսկին հասկացաւ իր սխալը, և աշխատեց ռուս բանակների լքած ճակատները՝ տեղական, սահմանակից ռուսահպատակ ազգերի զօրքերով պաշտպանել։

Եթէ Կերենսկու այդ ծրագիրը արևմտեան ճակատում իրագործելը՝ իր ահագին դժուարութիւնն, նոյն իսկ անհնարութիւնն ունէր,—արևելեան ճակատում առանձին դժուարութիւն չէր ներկայացնում՝ առնելով ինկատի Տաճկական բանակի թուլութիւնն ու յոգնածութիւնը։

Կերենսկուն իրան էլ, ամբողջ աշխարհին

էլ քաջ յայտնի էր, որ Կովկասեան ազգերի մէջ՝ Հայերը ամենից աւելի առաջադէմ են, ուրեմն և աւելի արժանի վստահութեան։ Ուրեմն նրանք կարող են Տաճկաստանից վերցրած երկիրները փոքր Ասիայում ձեռքից բաց չ'թողնել։

Կերենսկու բաղդից՝ այդ միջոցում Պետրոգրադում էր գտնւում Յակոբ Բագրատունին, որ չնայած իր երիտասարդութեանը՝ արդէն գեներալութիւն էր ստացել, որ շնորհիւ իր ռազմագիտական կրթութեան, իր լեզուագիտութեան՝ կայսերական յանձնարարութեամբ՝ մի քանի անգամ եղել էր Բեռլինում, Լոնդոնում և Փարիզում։ Պատերազմի ժամանակ Բագրատունին՝ Բրուսիլովի բանակի շտաբի գլխաւորն էր, իսկ միապետութեան տապալման նախօրէկին՝ Պետրոգրադի Զինուորական Շրջանի մեծաւորը։—

Կերենսկու կառավարութիւնը ցարիզմի ժամանակ գործող քաղաքացիական և զինուորական յայտնի գործիչներին և պաշտօնեաներին հալածելով և կալանաւորելով՝ Բագրատունու ձեռք չէր տւել՝ համարելով նրան ոչ այնքան յայտնի գործիչ, և նոր իշխանութեանը վնասելու անձեռնհաս և անընդունակ։

Ուստի նրան առաջարկեց արևելեան ճակատի պաշտպանութիւնը իր վրայ վերցնել՝ ռու-



սական բանակներում եղող բոլոր հայ զինուորներից և հայ մեծ ու փոքր սպաներից մի հայկական կորպուս կազմակերպելով։

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍ.

Բագրատունին ընդունեց Կերենսկու առաջարկը։

Հաւաքուած տեղեկութիւններից երևաց, որ հայկական կորպուսի թիւն 80 հազարից աւելի զինուորի կը հասնի, որ բաւարար ուժ է։ Ապա Կերենսկին և Բագրատունին որոշեցին որ հայկական կորպուս կազմելու միտքը կառավարութիւնից չ'բղխի, այլ իբրև թէ հայ ժողովրդի իրանից, այսինքն ճիշտ այնպէս, ինչպէս որ այդպիսի դէպքերում վարւում էր միապետական իշխանութիւնը։—

Յանձնարարւեց Բագրատունուն այս իմաստով էլ մասնաւոր նամակ գրել իր կողմից Կովկասեան Կոմիսարիատի հայ անդամ Միքայէլ Բաբաջանեանցին։ Վերջինս տեսնւեց հայ գործիչների հետ Թիֆլիսում ու նրանց համաձայնութիւնը ստացաւ։—

Եւ հիմնւելով Ազգային գործիչների միջնորդութեան վրայ՝ Կովկասեան Կոմիսարիատը՝ իր նախագահ Խարլամովի և Բաբաջանեանցի

ստորագրութեամբ՝ գրաւոր դիմումն արաւ Կերենսկուն մի յատուկ պատգամաւոր հայ սպայի միջոցաւ։—

Կերենսկին անմիջապէս կարգադրեց, որ ռուս բանակներում գտնուած բոլոր հայ զինուորներն, և մեծ ու փոքր սպաներն, անյապաղ հաւաքուեն Կովկաս և սպասեն մինչև գեներալ Բագրատունու ժամանելն։ Ինքը Բագրատունին առժամանակ մնաց Պետրոգրադում՝ հայկական կորպուսի անտեսական և զինական կարիքներն հոգալու և կարգի բերելու համար։

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Յայտնի է, որ 1917 թ. ամառուայ սկզբին Թիֆլիսում միջկուսակցական մի համագումար եղաւ, որին հետևեց քիչ յետոյ Ազգային համախորհրդակցութիւնը, որտեղ աթոռներ բռնեցին գրեթէ բացառապէս հայ քաղաքական կուսակցութիւնները։ Վերջիններիս մէջ՝ քանակով շատ մեծ էր Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Համախորհրդակցութիւնը ընտրեց Թիֆլիսի Ազգային ժողովը, որի մէջ տեղ բռնեցին նաև հայ ժողովրդական, սոցիալ դեմօկրատ և սոցիալ յեղափոխական կուսակցութիւնների ներկայացու-



ցիչներն ևս՝ ընդ նախագահութեամբ դաշնակցական Աւետիս Ահարոնեանի։

Թիֆլիսի Ազգային Ժողովի ու Խորհրդի մի ճիւղն էլ՝ միջկուսակցականներն Բագւում ընտրեցին՝ նախագահութեամբ դաշնակցական Աբրահամ Գիւլխանդանեանի։

Թիֆլիսի և Բագւի Ազգային ժողովներն ու Խորհուրդներն՝ տակաւին գործի չէին ձեռնարկել, երբ դաշնակցական յայտնի ու անյայտ գործիչներն,—սկսել էին գաւառներում շրջել և հայ կամաւորական խմբեր կազմակերպելու միտքն արծարծել։

Դրանցից մինին,--Համազասպ Սրուանձտեանին ես պատահեցի Էջմիածնում, ուր Յունիսին տեղի ունեցած եկեղեցական համագումարին մասնակցողներից մէկն էր։— Իմ հարցմանը Սրուանձտեանը պատասխանեց թէ, արդարև, խմբեր կազմելու հրահանգ ունի և ինքը համոզուած է, որ եթէ իր ձեռքի տակ կարողացաւ 20,000 զինուոր հաւաքել՝ կարող է միայնակ Տաճկահայաստանը տաճիկներից մաքրել։

Էջմիածնից վերադառնալիս՝ ես մի քանի օր Թիֆլիսում մնացի, ուր անդադար լսում էի Անդրանիկի, Համազասպի, Դրօյի և մեր միւս առաջնակարգ պարտիզանների անունները և նրանց գործունէութիւնը կամաւորական խմ-

բեր կազմելու նկատմամբ։

Ուստի «Հայկական Հարցը» խորագրով յօդուածս պարտք համարեցի վերջացնել հետեւեալ տողերով՝ «... Սրանով ես չեմ ուզում ասել, որ հայութեան գլխից վտանգն անցաւ։ Ոչ, վտանգը դեռ կայ, եւ այս անգամ ամենից շատ Ռուսահայութեան գլխին է պտոյտ գալիս: Եւ այդ վտանգի առաջ բերողը՝ դարձեալ Հ. Յ. Դաշնակցութիւնն է լինելու, երբ ձեռնարկէ նոր ի նորոյ կամաւորական խմբեր կազմելու, որոնց հի-մի լուր, դժբախտաբար, շրջշրջում է ժողովրդի մէջ» (*)

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՉԸ

Հայկական կորպուս կազմելու պաշտօնական թոյլտւութիւնը Պետրոգրադից ստանալուց յետոյ՝ Թիֆլիսի Ազգային Ժողովը իր Խորհրդի միջոցաւ հետեւեալ կոչն ուղղեց հայ ժողովրդին՝։

«Կովկասեան ճակատի մերկացումը սպառնական կերպարանք է առել հայ ժողովրդի ֆիզիքական և քաղաքական գոյութեան համար։ Ռուս յեղափոխութեան արժէքաւոր նուաճումները պաշտպանելու, ինչպէս նա և հայ ժողովրդի գոյութիւնը ճակատի վտանգից փրկե-

*) «Վան—Տոսպ» 1917 № № 29-30.



լու համար հայութիւնը պարտաւոր է լարել իր բոլոր կենդանի ույժերը։ Ճակատագրի բերումով (բերմունքով) Ազգային Խորհրդին է վիճակւում վարել հայ ժողովրդի բաղդը այս վտանգալից ժամանակ։ Իբրև Մեծ Ռուսաստանի ազատ քաղաքացիներ, և իբրև հայ ժողովրդի բաղդի վարիչներ, իր քաղաքացիական և ազգային պարտականութեան, ինչպէս և իրեն վրայ ընկած ծանր պարտականութեան լիակատար գիտակցութեամբ Ազգային Խորհուրդը զէնքի է կանչում ճակատի պաշտպանութեան համար բոլոր հայերին Անդրկովկասի և Ռուսաստանի սահմաններում, վստահ թէ մեր հարեւան ազգերն եւս իրենց միջոցներ ձեռք կառնեն (*) Կովկասի կուլտուրական և յեղափոխական նուաճումները պաշտպանելու համար։

Այդ նպատակով կարգադրում ենք.

1) որ այն բոլոր հայերը, որ ծնւել են 1899 թ. մինչև նրանք որ 1918 թ. Յունուարի 1-ին դարձել են 25 տարեկան լրիւ, պարտաւոր են անմիջապէս անցնել հայ զօրքերի շարքերը՝ ենթարկւելով այն դեկրետների արամադրութիւններին, որ հրատարակել է Անդրկովկասի Կոմիսարիատը զօրակոչի վերաբերեալ։

*) Ընդգծումները մեր են, պատճառը յետոյ կը տեսնենք։—

7/XI–1922

2) Որ այն բոլոր հայ զինուորները, որ 25-ից բարձր տարիք ունին մինչև նրանք, որ 1918 թ. Յունուարի 1-ին դարձած են 32 տարեկան, պարտական են մնալ այն զօրամասերում, ուր կան, իսկ ովքեր այս կամ այն պատճառով չեն մտած կամ թողել են զօրքի շարքերը նոյն հիմունքներով, որ բերուած են Անդրկովկասի Կոմիսարիատի դեկրէտի մէջ զօրակոչի վերաբերեալ»:

Յայտնում ենք նաև իշխանութիւն հայ ժողովրդի, որ ազգային տեղական միլիցիա կազմելով պէտք է պաշտպանել հայ ազգաբնակութեան պատիւը, կեանքը և գոյքը աւազակների դէմ՝ Անդրկովկասի Կոմիսարիատի հաւանութեամբ և նրա բարեացակամ աջակցութեամբ:

Միաժամանակ Խորհուրդը իր վրայ է առնում զինուորների ընտանիքների ապահովութիւնը պետական և ազգային միջոցներով»:

«Այն բոլոր հայերը, որ կը փորձեն որևէ միջոցով խուսափել զօրակոչից, կը յայտարարուեն հայրենիքի, ազգի և յեղափոխութեան դաւաճան և կենթարկուին պատասխանատուութեան»: (4 փետր. 1918 թ.)



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ

Ազգային Խորհրդի այդ կոչից առաջ՝ Ռուսիայի սահմաններում գտնուած Տաճկահայերը, Անդրանիկի ղեկավարութեամբ մի թիւրքահայ երկրապահ դիւիզիա կազմեցին՝ Անդրանիկի հրամանատարութեան ներքոյ, որ այդ առթիւ հետևեալ կոչը հրատարակեց «Թիւրքահայ եղբայրներին»:

«Ռուսական զօրքը պատերազմի երկարատև զրկանքներէն և վերջին անցուդարձերէն լքուած՝ կը թողու Հայաստանը ու կըհեռանայ անպաշտպան թողնելով մեր հայրենիքի սահմանները և խաղաղ ազգաբնակութիւնը, որի համար ստեղծուած է օրհասական դրութիւն:

Թշնամու բանակները և քիւրդական կարգ մը աւազակային խումբերը՝ արդէն իսկ գիտակ այս վիճակին՝ կը պատրաստուին օգտուել հանգամանքէն՝ դարձեալ արիւնով ողողելու մեր հայրենիքը, սրէ անցնելու խաղաղ հայ և ուրիշ ժողովուրդները, և Հայաստանը կցելու Թիւրքիային:

Հայութիւնը կապրի այսօր ճգնաժամային րոպէներ:

Թիւրքահայ եղբայրներ.

Հայրենիքը վտանգի մէջ է:

Մեր բերանով ողջ հայութիւնը և բազմաչարչար նահատակներու սուրբն է, որ ձեզ կը դիմէ։

Ձեզ կը դիմենք, բոլոր կուսակցութիւններ անխտիր, դադար տուէք ձեր վէճերուն և մղեցէք ձեր ամէն եկող երիտասարդութիւնը դէպի հայրենիքի վտանգուած սահմանները։

Ձեզ կը դիմենք, հայրենակցական միութիւններ, գործի գլուխ անցէք, և ձեր ամէն եկող հայրենակիցները անմիջապէս առաջնորդեցէք դէպի հայրենիքի պաշտպանութեան գործը։

«Ձեզ կը դիմենք, երիտասարդ մտաւորականութիւն, ի սպաս դրէք ինքնապաշտպանութեան գործին ձեր ընդունակութիւնները և ձեր բոլոր ուժերը։

«Ձեզ կը դիմենք, ուսուցիչներ, բժիշկներ, իրաւաբաններ և այլ տեսակի մասնագէտներ, տրամադրեցէք ձեր գիտութեան պաշարը հայրենիքի պաշտպանութեան օգտին։

«Արհեստաւոր գիւղացի և բանւոր, ձեզ կը դիմենք, դուք միշտ եղած էք զգայուն և զոհաբերող, օգնութեան հասէք վտանգուած հայրենիքին։

Եւ ձեզ ամենքին՝ ով զգացում ունի և գիտակցութիւն հայրենիքին սպառնացող վտան-



գին, ձեզ կը դիմենք, շտապեցէք ով ինչով կարող է պաշտպանելու համար հայրենիքի սահմանները և անոր ազգաբնակութիւնը»։

«Միջոցներ ձեռք առնուած են ապահովելու երկրապահ զօրաշարքի մէջ մտնող զինուորներու ընտանեաց ապրուստը»։

«Մենք չենք հաւատալ՝, որ գտնուի մէկը, որ այս ծայրագոյն ճգնաժամին նախընտրէ իր հանգստութիւնը և արձագանք չտայ այս կոչին։ Թող գիտնան բոլորը, որ այդպիսիները դաւաճան պիտի համարուին սերունդներու, մարդկութեան և պատմութեան առջև, եւ ոչ մի կուսակցութիւն, միութիւն կամ ընտանիք չպիտի ուզէր հիւրընկալել իր ծոցին մէջ այդպիսիները, որին սիրտը քար պիտի լինի և խիղճը մեռած»։

«Հայրենիքը վտանգի մէջ է։
Վտանգի մէջ է մեր գոյութիւնը։
Արձագանգ տուէք մեր կոչին»։
Ստորագրել են՝

Հայաստանի ապահովութեան Խորհուրդ եւ Հայաստանի երկրապահ զօրամասի հրամանատար Անդրանիկ։

Թիֆլիս, 25 դեկտ. 1917 թ.

# ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՒ ԴՈԼՈՒԽԱՆԵԱՆԻ ԿՈՉԸ

Բացի այս կոչերից՝ մի այլ կոչ էլ «հայ երիտասարդութեան» ուղղեց հրամանատար Անդրանիկը եւ զօրաբաժնի արտիլերիայի ինսպեկտոր պօլկովնիկ Դօլուխանեան։

«Ձեզ հայ պատանիներ. ուսանողներ, գիմնազիստներ եւ ինտելիգենտ երիտասարդութիւն, դիմում ենք այս կոչով արձագանգ տալ ժողովուրդական գործին։ Այս պատմական բոպէին, երբ ամեն ինչ արուած է մեզ եւ հարկաւոր է միայն, որ կարողանանք մեր ձեռքին պահել մեր հայրենի հողը եւ ապահովենք մեր տանջուած ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը, դուք անբիծ երիտասարդութիւն, մեր ժողովրդի խեղճը, լցրեցէք կազմակերպուող հայ զօրքերի փառապանծ շարքերը և օգնեցէք, որ ուժեղ բանակ ստեղծենք։ Ընկերներ, ֆրօնտը դատարկուած է, ռուս զօրքը հեռացել է, Հայաստանը ներսում ենթարկուած է բարբարոսական վոհմակների ասպատակութեանը և միայն ուժեղ, կազմակերպուած բանակը կարող է ապահովել մեր ժողովրդի կեանքը եւ գոյութիւնը։

Երիտասարդներ, եկէք մեզ մօտ, եղէք նրանց հոգին եւ աշխատեցէք նրանց հետ ընդհանուր ժողովրդական գործի համար։ Ներկա-



յումս մենք կազմակերպում ենք արտիլերիա՝ միացեալ հայ զօրաբաժնի համար, ուր մտնում են գլխաւորապէս Թիւրքահայերը։ Ընկերներ, դուք այստեղ պէտք է մտնէք իբրեւ հասարակ զինուորներ, բայց մասնագիտական պաշտօնների, որոնց համար դժուար է պատրաստել ոչ ինտելեգենտ զինուորին։ Մեզ հարկաւոր են Թնդանօթաձիգ հետախոյզներ, գնդի հսկիչներ, տելեֆօնիստներ, գրագիրներ եւ այլն։ Ձեզ հրաւիրում ենք այդ պաշտօններին, իբր ամենալուրջ աշխատանքի, որովհետեւ առանց այդ մասնագէտների արտիլերիան չի կարող գոյութիւն ունենալ։ Մենք փորձուած սպաներ ունենք, որոնց ղեկավարութրամբ եւ ինստրուկտորների կազմը կը դառնաք (*)

---

*) Ծանօթ. Համանման մի կոչ էլ Բագւում գըտնուած հայ ուսանողներն ուղղեցին իրանց ընկերներին, սպառնալով որ խուսափողները բարոյական ծանր պատիժների կենթարկուեն կոչի հեղինակներից կազմուած ուսանողական Կօմիտէի կողմից։ Էլ չենք յիշում «Արև»-ի Թմբկահարութիւնները։

Այս տողերն կարդալիս՝ յանկարծ միտքս ընկան «ծիծեռնա՛.» երգի հեղինակի բառերն՝

«Լաւ ես խօսում, Յակոբջան,
Հատը չկայ, հաւատա.
Մէկ կոպէկի գործ կանես,
Մէկ մանթէի շամաթա»։

## ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆՈՐ ԿՈՉԸ

Մենք հիմունքներ ունենք պնդելու, որ այս բոմբինաւոր կոչերից, այս թմբկահարութիւնից ամէնից և ամենից առաջ շատ օգտուեցին Տաճկաստանի էմիսարներն, որոնք վխտում էին Կովկասում, մանաւորապէս Բագւում, քան իրանք կոչերի հեղինակները։ Եւ դրա ապացոյցը Անդրանիկի հրատարակած այս նոր կոչըն է՝ «Հակառակ այն ոգեւորութեան, որ տեսնւում է առհասարակ թիւրքահայերի մէջ Հայաստանի երկրապահ զօրամասի շարքերը արձանագրուելու առթիւ, Թիֆլիսում և գաւառներում նկատւում են նաև մարդիկ, որոնք դեռ տատանւում են, նկատւում են նաև մարդիկ որոնք զանազան հնարքների են դիմում խուսափելու համար հայրենիքին ունեցած իրանց պարտականութիւնից։

Հայրենակիցնե՛ր, դատապարտուած պայմանների բերմամբ մեր հայրենիքը պատմութեան մէջ չէ ունեցել երբէք այնպիսի ճգնաժամային կարիք իր զաւակների ընտրուած ուժերին, և երբէք փոքրիկ թերացումները այնպէս ճակատագրական նշանակութիւն չէն ունեցել, որքան ներկայ պատմական օրերին»։—

«Հայաստանի Ապահովութեան Խորհուրդը



այս անգամ իր վերջին կոչն է անում այդ կարգի թերացողներին և յայտնում, որ ոչ ոք ինչ դասակարգի էլ որ պատկանելիս լինի,— վաճառական թէ արհեստաւոր, գործիչ, ինտելիգենտ, ուսուցիչ,—ոչ ոք իրան ազատուած համարելու իրաւունքը չպիտի ունենայ։ Հայրենիքը վտանգի մէջ է. ամեն հայ պարտաւոր է գնալ՝ դիմագրաւելու այդ վտանգին։

Այս կոչով մենք յայտարարում ենք, որ արդէն լրացած 40 տարեկաններին տուած պայմանաժամը։ Այսուհետև ով էլ որ լինի, եթէ անմիջապէս չներկայանայ զինուորական մարմիններին, այնպիսին պիտի յայտարարուի իր հայրենիքի հանդէպ դաւաճան և պիտի ենթարկուի օրէնքների բոլոր խստութիւններին։—

## ՎՐԱՑԻՆԵՐԸ

Նախ քան Ռուսիային պատերազմ յայտնելը՝ Օսմանեան կառավարութիւնը վրացիների բարեկամութիւնը ձեռք էր բերել։ Դեռ աւելին։

Մի խումբ վրացի ազգասէրներ, «Վրաստանի փրկութեան Կոմիտէ» անուան տակ՝ տաճիկների հետ պայման էին կապել համախոհութեամբ գործելու նպատակով։

Այդ պայմանի զօրութեամբ՝

1. Վրաց զօրքերին վերաբերեալ բոլոր գործերըն ամբողջապէս մտնում են Վրաց կառավարութեան իրաւասութեան ներքոյ։
2. Ինչպէս սպաներին և զինուորական մեծաւորներին, նոյնպէս և զինուորական շտաբը և գլխաւոր հրամանատարին նշանակում և արձակում է Վրաստանի ժամանակաւոր կառավարութիւնը։ Կոմիտէն պարտաւոր է հրամանատար նշանակել այն մարդուն, որը վայելում է տաճիկ կառավարութեան վստահութիւնը։
3. Այն դէպքում եթէ Վրաց վաշտի վարիչը չի գտնի կարևոր թւով սպաներ, սպայակոյտը լրացնելու համար իրաւունք ունի պահանջել տաճիկ կառավարութիւնից։

Միասին գործող տաճկական բանակի և վրացական զօրքերի գլխաւոր հրամանատարութեան իրաւունքը պատկանում է Կովկասեան ճակատում գտնւող տաճիկ գլխաւոր հրամանատարին։

Կովկասեան տաճիկ զօրքերի գլխաւոր շտաբը, Վրաց վաշտի մասնակցութեամբ, կատարելիք զինուորական գործողութիւնների յատակագիծ (ПЛАНЪ) է մշակում, զինուորական ծրա-



գրի ամբողջականութիւնը պահպանելու նպատակով։

Սրա հետ միաժամանակ վաշտը իրաւունք ունի պատերազմ մղել միայն Վրաստանի սահմաններում, որպէս զի հնարաւորութիւն ունենայ հիմնել ժամանակաւոր կառավարութիւն նրա համար, որ ապստամբեցնէ ժողովրդին։

Տաճիկ կառավարութիւնը պարտաւոր է օգնել վրացական զօրքերին այն ամեն բանում, ինչ որ կապ ունի պատերազմի հետ,—զէնքերի փոխադրութիւն և այլն։

Անհրաժեշտ դէպքում նա օգնում է նաև դրամով, որ յետոյ պիտի համարւի որպէս պարտք Վրաց կառավարութեան։

Խաղաղութիւնը կայանալուց յետոյ՝ Տաճկաստանը անյապաղ դուրս է բերում իր զօրքերը Վրաստանի սահմաններից։

Տաճիկ կառավարութիւնը ստանում է հետևեալ իրաւունքները։

1. Պատերազմի բոլոր ընթացքում նա օգտւում է երկաթուղու գծով և ուրիշ ճանապարհներով։
2. Զինուորական կարիքների համար՝ բռնագրաւումներ անելու վրաց կառավարութեան օժանդակութեամբ։
3. Տաճկաստանը իրաւունք է ստանում զինուո-

րական օրէնքներ հրատարակելու, իսկ ընդհանուր քաղաքական և քրէական օրէնքների հրատարակութեան և ադմինիստրացիայի իրաւունքը պատկանում է Վրաց ժամանակաւոր կառավարութեանը։

1. Տաճկաստանը պարտաւորւում է ճանաչել Վրաստանի անկախութիւնը, նրա անվիճելի իրաւունքները ռէալ—պատմական տերիտորիայում, որը իւր մէջ պարունակում է։

Վրաստանի սահմանը գնում է Սև ծովի ափով Դակովսկից ուղիղ գծով մինչև Արուշիր. այնտեղից ուղիղ գծով մինչև Էլբուրուս, որը պիտի գտնուի Վրաստանի տիրապետութիւնում։

Էլբուրուսից ուղիղ գծով մինչև Բայթա և ապա մինչև Սաակով։ Սակովից մինչև Սալավաթ։ Սալավաթից ուղիղ գծով մինչև Գեօքչայի լիճը, որի հիւսիսային մասը կը պատկանի Վրաստանին։ Գեօքչայ լճից սահմանն անցնում է հիւսիս ուղիղ գծով, այնտեղից մինչև Բայվան և Արտանուչ, որը մնում է Վրաստանի կազմի մէջ։

Արտանուչից 1913 թ. ռուս—տաճկական սահմանով անցնում է մինչև Ճորոխ գետը։

2. Տաճկական կառավարութիւնը չպիտի արգելք հանդիսանայ ժամանակաւոր վրացական կառավարութեան կազմելուն Վրաստանի այն



մասում (ռայօնում), որը ամենից առաջ կը մաքրուի տաճիկ զօրքերից։ Տաճկաստանը չպիտի ընդդիմադրէ, եթէ կոմիտէն անհրաժեշտ համարէ Տաճկաստանի սահմանը մնող Ճորոխի ձախ ափին կազմակերպել ժամանակաւոր կառավարութիւն։

3. Հէնց որ Վրաստանը յայտարարուի անկախ՝ Տաճկաստանը ճանաչում է նրան անկախ և ընդունում է նրա ներկայացուցիչներին։

4. Տաճկաստանը չի սեպհականացնի այն հարստութիւնները, որ մնացին Ռուսաստանում, այլ տալիս է Վրաստանին. իբր նրան հասցրած դարևոր գերութեան և վնասների հատուցում։

5. Տաճկական զօրքը Վրաստանի տերիտորիայում գտնուելիս՝ ոչ մի կոնտրիբուցիա չի վճարում։

6. Տաճկական կառավարութիւնը չի խանգարի Վրաստանի տերիտորիայի միջոցով Վրաստան փոխադրել ռազմամթերք և զէնքեր, այլ ընդհակառակը աջակցութիւն ցոյց կու տայ։

7. Տաճկաստանը չի խանգարի «Վրաստանի փրկութեան Կոմիտէին» Տաճկական տերիտորիայում կազմակերպել վաշտեր (լէգէօններ) և իւր կողմից Տաճկաստանը խոստանում է օգնել այդ գործում։

8. Վաշտերը կազմած կլինեն երեք կարգի

զինուորներից։

1. Տաճկաստան, Գերմանիա և Աւստրիա գերի ընկած զինուորներից։

2) Այն վրացական էմիգրանտներից, որոնք պատերազմի պատճառով գաղթել են Տաճկաստան։

3) Այն զինուորական և քաղաքացի անհատներից, որոնք կը փոխադրուեն Տաճկաստան։

Վաշտի բոլոր ղեկավարներին և սպաներին նշանակում է «Վրաստանի փրկութեան կոմիտէն։

«Վրաստանի փրկութեան կոմիտէն պարտաւորւում է»։

1) Ամեն կերպ օժանդակել տաճկական զօրքերին։

2) Պրոպականդ մղել յօգուտ Տաճկաստանի ընդդէմ Ռուսիայի։

3) Նպաստել Վրաստան մուտք գործող տաճիկ զօրքերի բարեկամական ընդունելութեան։

4) Տաճիկ զօրքերին տեղեկութիւն տալ ռուսական ռազմաճակատի դէպքերի դրութեան մասին։

6) Թեթևացնել տաճիկ զօրքերի պատերազմական գործողութիւնների համար կատարւող շարժումներն ու կենտրոնացումները»։—

Ծիշտ է վրացի ազգասէրների այս պայմա-



նը չ՛գործադրուեց և նրանց ազգէ ղեկավարները վերջերում՝ Բրեստ-Լիտովսկու դաշնագրից յետոյ՝ բաւուք համարեցին՝ Վրաստանը Գերմանիայի գիրկը նետել,— այնու ամենայնիւ թէ Վրաց ազգասէրների և թէ նրանց ղեկավարների այս գործողութիւնները՝ ցոյց են տալիս՝ թէ որ աստիճան միամիտ էր Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդը, երբ Ռուս-Տաճկական ճակատը պաշտպանելու պաշտօնը ստանձնելիս՝ «մեր հարևանների»—Վրացիների և Թաթարների մասնակցութեանը վրայ «վստահութիւն» էր յայտնում։—

Վրացիների վարմունքը մենք չենք դատապարտում, ինչ որ մեր քաղաքական և գրական գործիչները սիրում են անել դժբաղդաբար։—Վրացիք՝ դժգոհ ռուսական կառավարութիւնից՝ կամեցան նախ՝ իրանց հայրենիքը ազատել Ռուսների տիրապետութիւնից և երկրորդ՝ իրանց ժողովուրդն ու երկիրը փրկել կոտորածներից ու աւերածութիւններից, որոց անշուշտ Վրաստանը կենթարկուէր, եթէ Հայերի դիրքը բռնէր դէպի Տաճկաստանն ու Գերմանիան։—

Եւ վրացիք չ՛սխալուեցին։ Իրանց կրկնակի նպատակին եւ՝ նրանք հասան յաջողութեամբ։—

Բոլորովին այլ հարց է թէ ապագան ինչ

է պահում իր ծոցում գեղեցիկ Վրաստանի համար։ Կարող է պատահել, որ Վրաստանը Ռուսների ձեռքն անցնի նորից և նրա ժողովուրդը։ գոհ գնայ ռուսների իշխանութեանը. բայց դա դեռ չէ նշանակում, որ Վրացիք արժանի են դրան։ Ո՛չ, քաւ լիցի։ Դրանով Ռուսաստանը մի անգամ ևս ի հանդէս կը հանէ իր բարբարոսութիւնը և ազգեր կառավարելու անընդունակութիւնը։—

## ԹԱԹԱՐՆԵՐԸ.

Վրացիներից աւելի դժգոհ լինելու իրաւունք ունէին Ռուս կառավարութիւնից Անդրկովկասի Թաթարները, որոց հայրենիքին տիրելով՝ մի դար շարունակ՝ կապել կաշկանդել էր նրանց բարոյապէս և մտաւորապէս։ Ուստի և շատ բնական է, որ Կովկասի Թաթարների համակրութիւնը Տաճկաստանի կողմը պէտք է թեքուէր, ինչպէս համակրօն և համացեղ ազգի, նա մանաւանդ. որ Տաճկաստանի քամակին կանգնած էր հզօր Գերմանիան, որի կայսրը Բաղդադի մզկիթից, քառորդ դար առաջ, յայտարարել էր ի լուր աշխարհի, որ ինքը բարեկամ ու պաշտպան է կանգնելու երկրագնդիս 300 միլիօն մահմեդական ազգաբնակութեանը։—



Այս այսպէս լինելով՝ Կովկասի Թաթարները կարիք չունէին նոյն իսկ որ և գրաւոր բանակցութեան մէջ մտնել Օսմանեան կառավարութեան հետ։ Առանց դրան էլ՝ նրանց սրտները մէկ էր. ժամանակի բարերար ազդեցութեան տակ՝ նրանց սրտներից ու մտքներից արդէն դուրս էին եկել շիա և սիւննի հերձուածողութեան սերմանած տգիտութեան ու մոլեռանդութեան սերմերն։

Ուստի, շատ պարզ է, որ Կովկասի Թաթարների համակրութիւնը Տաճկաստանի կողմը պիտի լինէր՝ հէնց որ համաշխարհային պատերազմը փրթաւ։—

Սակայն Թաթարների քաղաքական գործիչները՝ մերոնց նման դօնքիշոտներ չէին. նրանք սիրում են լուռ ու մունջ գործել, ցուցամոլութիւնից և պոռոտախօսութիւններից խուսափել, հանգամանքներին յարմարուել և իրանց կարտերը՝ միշտ բաց չպահել խաղընկերների առաջ։

Պատերազմի ել և էջներին աջալրջութեամբ հետևելով՝ Թաթարական գործիչները տեսան որ Ռուսիան, քայլ առ քայլ, իր անկմանն է դիմում թէ արտաքին և թէ ներքին պատճառներով,—ուստի իրանք էլ սկսեցին իրանց նախա-

պատրաստութիւններն տեսնել՝ իրանց երկիրը ազատելու։

Դրա համար էլ նրանց անհրաժեշտ էր Ռուս տարրը Կովկասից հեռացնել և հայերի ռուսասիրական ձգտումներն ու գործողութիւնները սանձել ու ջլատել։—

Մուղանի ու Ղուբայի ռուս ազգաբնակութեան հալածանքն, նրանց գոյից ու կայից յափշտակելն, նրանց տաճարների և կուլտուրական կենտրոնների քանդելն ու փչանալը վերոյիշեալ նպատակի արդիւնքն էին։

Ճշմարիտ է այդ գործողութիւնների կատարողներն թաթարական աւազակներն էին, բայց դրանց այդ աստիճան յանդգնութեամբ և քաջութեամբ հրապարակ գալն՝ լոկ նրանց աւազակային բնազդումներն չէին և չէին էլ կարող լինել։ Անշուշտ աւազակները իրանց ներշնչող ու շարժողներն ունէին թէկուզ Անդրկովկասում վխտացող տաճկաց էմիսարների մէջ։ Ռուսական տարրը տեղի տւեց թաթար աւազակներին և թողեց ու հեռացաւ իր մշակած ու ծաղկեցրած վայրերից, որոնք, ի դէպ, ռուս դիպլոմատիան խլել էր տեղական բնիկ ժողովրդից և ռուս գաղթականներով լցրել։—

Ռուսներին տեղահան անելով ու քշելով աւազակային խմբերն սկսեցին այնուհետև Բա-



գու Թիֆլիսի երկաթուղու վագոններից դուրս հանել հայ ճանապարհորդներին և նրանց մորթոտել ու կողոպտել։

Ապա Գանձակի մօտ կապեցին երկաթուղու գիծը՝ գլխաւորապէս երկու նպատակով,— առաջինը՝ տաճկական ճակատից Ռուսիա վերադարձող զօրախմբերից նրանց զէնքերն խլելու*) և տաճկական ճակատի պահպանութեան համար՝ այնտեղ մեկնելու պատրաստւող հայերի գնացքը խափանելու։—

Թաթարների կողմից սա պատասխան էր Թիֆլիսի և Բագւի Հայոց ազգային Խորհուրդների կոչերին, և Բագրատունի գեներալի ղեկավարութեամբ՝ կազմւելիք հայկական կորպուսին։

## ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ԲԱԳՒՈՒՄ

Մինչ դեռ Կովկասում այս անցքերն էին կատարւում և Թիֆլիսի Սէյմում վրացիների և թաթարների համերաշխութիւնն ու բարեկամութիւնը այլ ևս չէր թաքցնւում, Պետրոգրադում տեղի ունեցած հոկտեմբերեան յեղափո-

*) Իմ ձեռքի տակ եղած մի պաշտօնական դօկումենտից երևում է, որ ռուս զօրքերից խլւած են 15,000 հրացան, 70 գնդացիր, 20 թնդանօթ և մեծաքանակ ռազմամթերք։

խութեամբ Կերենսկու կառավարութիւնը տապալեց, եւ նրան փոխարինեց Լենինի կառավարութիւնը, որ նախորդի մինիստրներին եւ յայտնի գործիչներին ձերբակալեց ու բանդարկեց։— Բանդարկուածների թւի մէջ ընկաւ գեներալ Բանգրատունին, որին հազիւ երեք ամսից յետոյ ազատ թողին՝ վրան որ և է յանցանք չգտնելով, կամ թերեւս, հետեւեալ պատճառով։

Կերենսկու գործերից հայկական կորպուսի մասին տեղեկանալով և այդ ձեռնարկութեանը համակրելով՝ Լէնինը յանձնարարեց Բագրատունուն անյապաղ գործի գլուխն անցնել։ Նա նրա տրամադրութեանը տակ մի յատուկ գնացք դրրեց և յատուկ յանձնարարականներով ճանապարհեց Բագու, ուր մարտի սկզբին հասնելով՝ Բագրատունին, մի քանի օրով, Անդրկասպեան երկիրն անցաւ։

Գեներալը հազիւ Զարչույ էր հասել, երբ Բագւի Հայոց ազգային Խորհրդի կողմից Ռոստոմ-Զօրեանը գնաց նրան յետ հրաւիրելու։ որովհետեւ տաճիկներն արդէն Երզրումը վերցրել էին Անդրանիկից, որին գեներալութեան աստիճան տալով՝ Պրժեվալսկին՝ փութացրել էր Երզրում հասցնել մի քանի հազար հայ զինուորներով։



Բագրատունին վերադարձաւ Բագու և Թիֆլիս—Բագուի երկաթուղու գիծն բանալու ծրագիրն սկսեց պատրաստել։

Այդ գործը նա վերջացրեց մարտի 14-ին, և հետեւեալ օրը պէտք է մեկնէր գիծը բանալու, բայց ի պատիւ իրան լինելի ճաշկերոյթի պատճառով՝ մի օր յետաձգւեց։ Ճաշը տեղի ունեցաւ մարտի 15-ին Համազասպ Սրուանձտեանի բնակարանում։ Ճաշն կազմողներն էին Ազգային Խորհրդի անդամներից ոմանք և դաշնակցական ջոջերն։

Ճաշից յետոյ՝ երեկոյեան ժամը 9-ին Բագրատունին՝ հրաժեշտ տալով իրան մեծարողներին՝ մեկնեց իր կայարանը իր առանձին սալօն-վագոնը, երկաթուղու կայարանում։—

Ճանապարհին նրա վրա մահափորձ կատարւեց զինւորական շորով մի պարոնի ձեռքով։ Գեներալը ձախ ոտքից վիրաւորւեց, և չորս ամսի չափ հիւանդանոցում բժշկւելուց յետոյ՝ վիրաւորւած ոտքի անդամահատութեամբ փըրկեց կեանքը։—

Յանցաւորին բռնելու կամ հետախուզութիւն ու քննութիւն կատարելու միջոց չեղաւ, որովհետեւ 2 օրից յետոյ՝ քաղաքացիական կռիւն սկսւեց Բագւում։

# ՄՈՒՍԱՒԱԴ

Վերեւում մենք տեսանք, որ 1914 թուի պատերազմը ինչ հորիզոններ բացեց մեր հարեւան Վրացիների և թաթարների առաջ։ Տեսանք թէ նրանք ինչ նախնական միջոցներ ձեռք առան Ռուս իշխանութեան լուծը թօթափելու և իրանց ինքնուրոյն ու անկախ իշխանութիւնը ունենալու։

Գրեթէ ողջ Ռուսիան իրանց սօցիալական վարդապետութեամբ դղրդացնող վրացի մեծահամբաւ սօցիալ-դեմոկրատները՝ Ռուսիայի մեծամասնականների ձեռքից՝ իրանց հայրենիքը Կովկաս փախչելով ամենաթունդ ազգայիններ դարձան և բոլորովին իրանց ազգի անկախութեան գործին նուիրուեցին։—

Թաթարական քաղաքական գործիչները հենց սկզբից և եթ ազգայիններ էին և այդպէս էլ մնացին մինչև վերջը

Նրանք էլ չ'կամեցան այլ ևս Ռուսիայի հպատակը մնալ, այլ ձեռնարկեցին իրանց ինքնուրոյն, անկախ երկիրն ու իշխանութիւնն ունենալու, որ շատ ազնիւ ու բնական է ամեն մի փոքր ի շատէ գիտակից ազգի համար, երբ նա իրան տիրող ազգի կամ իշխանութեան համար՝ խորթ, արհամարուած և իրաւազուրկ զաւակ է դարձել։



Թաթարական քաղաքական գործիչների մէջ առաջին տեղը բռնում է «Մուսաւատ» (հաւասարութիւն) կոչուած կուսակցութիւնը Բագւում։—

Կայսերութեան ժամանակ այդ կուսակցութիւնը գործում էր ծածուկ, բայց ռուսական յեղափոխութիւնից յետոյ՝ սկսեց աշկարայ գործել, ունենալով իր օրգանները՝ «Աչըք սեօզ» (Բաց խօսք) թուրք լեզուով, և «մահմեդական կազմակերպչական կօմիտեսի Տեղակատու» Ռուս լեզուով։

«Մուսաւադի» հիմնադիրների և ղեկավարների թւում կան յայտնի, բարձր կրթութեան և լաւ համբաւի ու դիրքի տէր անձինք, որոնց շնորհիւ կուսակցութիւնը շատ արագ կերպով սկսեց տարածուել Կովկասում, և փոքր ի շատէ յայտնի թաթարաշատ քաղաքում իր ճիւղն հիմնելով՝ ահագին ժողովրդականութիւն ձեռք բերեց ամէն ուրեք, առաւելապէս Բագւում ու Գանձակում։

Իհետեւումն այդ ժողովրդականութեանը՝ «Մուսաւատը» ճնշող ազդեցութիւն սկսեց գործել թաթարների ամենատեսակ ազգային հիմնարկութիւններում ու գործերում։

1914 թուի պատերազմը լաւ առիթ աւեց «Մուսաւաթ»-ին իր գործունէութիւնը աւելի ուժեղ կերպով երեւան հանելու յօգուտ սեպհական ազգի անջատմանն Ռուսիայից և նրա անկախութեանը։—

1917 թ. հոկտեմբերեան յեղափոխութիւն, որով Ռուսիայի իշխանութիւնը մեծամասականների ձեռքն անցաւ, «Մուսաւաթի» համար մի առանձին բաղդաւորութիւն եղաւ։

Լէնինի կարգադրութիւնների շնորհիւ Ռուս բանակի վերջնական կազմալուծումն ու քայքայումն, դաշնակից տէրութիւնների մէջ կնքուած գաղտնի դաշնագրների հրատարակումը, նրանց և Ռուսիայի փոխադարձ յարաբերութիւնների խզումը, ինքնորոշման մասին օտարագիրներին տրուած դեկրետներն և մանաւորապէս Արեւելեան մահմէտականութեան (*) ուղղած Լէնինի յայտնի կոչը՝ նրանց ինքնորոշման մասին,— «Մուսաւաթին» այն համոզմանը բերին, որ իր բաղձանքի օրերն եկել հասել են։—Ուստի և սկսեց առանձին իմն քնքշութեամբ և բարեհաճութեամբ՝ իր ձեռքը մեկնել մեծամասնականներին, նրանց ամէն մի առաջարկը պաշտպանե-

*) Յայտնի է, որ Լէնինը մի այդպիսի կոչ էլ հայերին ուղղեց՝ Տաճկահայաստանը Ռուս զինւորներից դատարկելուց յետոյ։—



լով և նրա հակառակ քաղաքական միւս կուսակցութիւնների հետ՝ պայքարելով։—

Այդ կուսակցութիւնների թւումն էր այդ ժամանակ և մեր Հ. Յ. Դաշնակցութիւնը։—

Սակայն շատ ժամանակ չանցած՝ մեծամասնական իշխանութեան և «Մուսաւաթի» մէջ մի սև կատու անցաւ։

Երեկւայ բարեկամները՝ այսօր միմիանց թշնամի դառնալով՝ սկսեցին միմեանց կոկորդից բռնել։

Կռուի մանրամասնութիւնների մէջ չենք մտնում, այսքանն միայն կասենք, որ մինչդեռ «Մուսաւաթը» առաջ կարծում էր, որ ինքը Լէնինին է խաբում, այժմ տեսաւ որ, ընդհակառակը, ինքն է խաբւողը։

Ազգերի ինքնորոշման մասին առատ և աժանագին դեկրետներ և կոչեր հրատարակելով՝ Լէնինը գլխաւոր նպատակ ունէր ժամանակաւոր կառավարութեան ոյժը իսպառ ջլատելու, և հպատակ օտար ազգերին իր կողմը գրաւելով, իր ոյժն ու իշխանութիւնը ևեթ զօրացնելու և ամրացնելու։ Եւ երբ որոշ չափով նա իր նպատակին հասաւ, այնուհետև հէնց ինքը առաջինը սկսեց ազգերի ինքնորոշման գաղափարի դէմ կռուել թէ Ռուսիայումև թէ մեզ մօտ, Կովկասում։

Մեծամասնական իշխանութեան այս խաղը «Մուսաւաթի» հաշուին չէր գալիս, ուստի նա յանկարծ ծառս եղաւ նրա դէմ, իմ կարծիքով, իրանից անսպասելի թեթեւամտութեամբ։

Այստեղից ահա ծագեցաւ Բագւի, այսպէս կոչուած, քաղաքացիական կռիւը։ (*)։

## ԲԱԳՈՒԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՒԸ (**)

Մարտի 17-ին (հ. տ. 1917) քաղաքում յանկարծ ձայն ընկաւ թէ «Էվէլինա» շոգենաւի վրայ զինուած մարդիկ են հաւաքւում Լենքօրան գնալու համար։ «վայրի դիվիզիայի» մարդիկն էին դըրանք։—

Զին.-Յեղ.-Կոմիտէն կարգադրեց չ՚թողնել որ շոգենաւը հեռանայ և վերահսկիչ պահակախումբ ուղարկեց պարզելու թէ ինչ զօրամասեր են

*) Այս անունով էլ մենք կանուանենք այդ կռիւը մեր նկարագրութեան մէջ, թէպէտ և քաղաքացիական կռիւ չենք համարում այն, այլ յեղափոխական, ազատագրական։ Բագւի փոքրամասնականների թերթը այդ կռիւը «ազգայնական» անուանեց։ Որոշ չափով այդտեղ ճշմարտութիւն կար։—

Դրան առիթ տուողն Հ. Յ. Դաշնակցութիւնն եղաւ, ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք։

**) Այս գլուխ գրելիս՝ օգտուելով եմ մեծամասնական իշխանութեան պաշտօնական «Տեղեկատու»-ից։



հեռանում քաղաքից և ում կարգադրութեամբ։ Պահակախումբը կոպիտ ընդունելութեան հանդիպեց՝ անդամներից մի քանիսը ձերբակալուեցին շոգենաւի վրայ, իսկ միւսները համազարկի ենթարկուեցին, որոնցից ոմանք վիրաւորուեցին, ոմանք էլ սպանուեցին.

Ուստի Կովկասեան Զօրաբանակի Զին. Յ. Կոմիտէն և Գործադիր Կոմիտէն անհրաժեշտ համարեցին պահանջել, որ պահակախմբի զինուորներին ոճրագործօրէն գնդակահարող անձինք իրանց զէնքերն յանձնեն. ապա անմիջապէս քննութիւն նշանակեց այդ դէպքի առթիւ։

Երբ այդ առթիւ մուսուլման և Հայ ազգայինխորհուրդների կողմից պատգամաւորութիւն եկաւ Զին.-Յեղ.-Կոմիտէի մօտ, վերջինս յայտնեց թէ մինչև քննութեան վերջանալը զէնքերը պիտի յանձնուին Գործադիր Կոմիտէին, և թէ՝ վերջինս երաշխաւորում է այն բոլոր անձանց անձեռնամխելիութիւնը, որոնք զինաթափ կը լինին «Էվէլինա» շոգենաւի վրայ։

Պատգամաւորութիւնը համաձայնեց այդ պահանջին և շոգենաւ գնալով առաջարկեց որ զէնքերը յանձնեն, որ և կատարեց խաղաղ կերպով։

Միևնոյն ժամանակ Հայոց Ազգային Խորհուրդը յայտարարեց, որ ինքը կատարեալ չէզօ-

ժողովին է պատկանում: Այնուհետև ձեռնարկւեց դէպքի քննութեանը, որից երևաց որ «վայրի դիւիզիան» շարժւում և գործում է «Մուսաւաթի» հրահանգով և նրա գաղտնի ղեկավարութեամբ, չնայած որ Ցեղ. Կոմիտէի մէջ ի պաշտօնէ մուսաւաթական անդամներ կան:

Քննութիւնը ապացուցեց որ «վայրի դիւիզիայի զինաթափման հետևեալ օրը «Մուսաւաթի» հրահանգով քաղաքի զանազան մասերում միտինգներ կայացան թաթար ժողովրդի ձեռքով: Գրգռալից ճառեր խօսեցին Բան.—Զին. և Նաւաստ.—Պատգամաւորների Խորհրդի դէմ:

Այդ միտինգների ընդհանուր որոշմամբ՝ Գործադիր Կոմիտէի մօտ, երկու զանազան մուսուլմանական կուսակցութիւնների կողմից մի պատգամաւորութիւն եկաւ և խնդրեց, որ յուզւած թաթար ժողովրդի մտքերը հանդարտեցնելու համար՝ անհրաժեշտ է զէնքերը յանձնել մահմէտական մէջկուսակցական Կոմիտէին:

Գործադիր կոմիտէի նախագահ Ջափարիձէն խոստացաւ պատգամաւորութեան խնդիրը անմիջապէս ներկայացնել իր միջորդութեամբ միևնոյն շինութեան մէջ գումարւած Զօրաբ.—Զեն.—Ցեղ. Կոմիտէին: Սակայն Ջափարիձէն դեռ իր զեկուցումը չէր վերջացրել, որ Թա-



թարական երկու փողոցներից հրացանաձգութիւն սկսւեց Խորհրդի քաղաքի պահակ զինւորների վրայ:

Միաժամանակ տեղեկութիւն ստացւեց, որ կարմիր զօրքի հեծեալ հարիւրեակի և թնդանօթաձիգ խմբի վրայ յարձակւում է կատարւել: Ստուգւեց նաև որ մահմեդականների մի քանի թաղերում խրամատներ են փորւում, միւսներում բարիկադներ պատրաստւում, և թէ, վերջապէս, մի շարք տների կտուրներից կանոնաւոր հրացանաձգութիւն է սկսւել:

Այս բոլորը նկատի առնելով՝ Գործադիր Զին.—Ցեղ. Կոմիտէները՝ յեղափոխական պաշտպանութեան մի կոմիտէ կազմակերպեցին, որ անմիջապէս պատերազմ հրատարակեց ի պաշտօնէ «Մուսաւաթ» կուսակցութեանը:

Կռիւը երեք օր տևեց: Երկու կողմից էլ բաւականին զոհեր եղան և թաթարական ու հայկական մի քանի հայակապ, մեծարժէք տներ ու թաթարների բազարի մի մասը այրւեցին հրձիգութեամբ, մասամբ ծովափից ձգւած թնդանօթների կրակով:

Թաթար ժողովուրդը, շատ շատ, սկսեց փախչել քաղաքից դէպի շրջակայ գիւղերն: Հարուստներն, բացի կալանաւորւողներից, աւելի հեռաւոր տեղեր գնացին:

Երեք օրից յետոյ՝ թաթարների կողմից իրանց հոգևոր պետի առաջնորդութեամբ՝ մի պատգամաւորութիւն ներկայացաւ Յեղ. Պաշտպանութեան Կոմիտէին, և նրա վերջին պահանջը,— ուլտիմատումը ամբողջովին ընդունելով՝ հաշտութեան պայմանը ստորագրեց: Պայմանի առաջին և գլխաւոր կէտը մեծամասնական իշխանութեան ճանաչելն ու ընդունելն էր ինչպէս Բաղւում նոյնպէս և կենտրոնում:

## ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՉԷԶՕՔՈՒԹԻՒՆԸ

Քիչ առաջ ասել էի, որ ռուս միապետութեան տապալումը ամենալաւ առիթ ներկայացաւ հայերի համար՝ մահմէտականութեան հետ հաշտուելու, և սկսել նրանց հետ դրացիական փոխադարձ լաւ յարաբերութիւն ունենալու՝ ինչպէս Տաճկահայաստանում, այնպէս և Ռուսահայաստանում, որտեղի մահմեդականները թէ և չէին արտայայտում, բայց անշուշտ չէին էլ համակրում մեր հակաթիւրք շարժումներին Տաճկաստանում:

Բաղւի մեծամասնական իշխանութեան և «Մուսաւատի» մէջ ծագած ընդհարումը՝ եկաւ երկրորդ լաւ առիթը մեզ տալու, հարևան թաթարների հետ մեր բարեկամանալուն՝ գոնէ մեր



չէզօքութեամբ, որպէսզի մեր հարևանները հաւատի լինին, որ մենք, հայերս, այլ ևս ցանկութիւն չունենք Ռուսերի համար մեր ձեռքով շագանակներ հանել կրակի միջից:

Ի պատիւ Բաղւի Հայոց Ազգային Խորհրդին՝ պէտք է արձանագրենք, որ հէնց այս խելացի ընթացքը բռնեց նա քաղաքացիական կռւի հէնց նախօրէկին:

Ինչպէս յիշել ենք իր տեղում՝ Խորհուրդը ի պաշտօնէ յայտարարեց, որ մեծամասնական իշխանութեան և «Մուսաւատի» ընդհարման դէպքում ինքը չէզօք դիրք է բռնելու: Եւ եթէ «նրանց մէջ հարցը զէնքով վճռուելու լինի՝ կողմերից ոչ մէկը չպիտի յոյս ունենայ Հայոց Ազգային Խորհրդի աջակցութեան վրայ, այն չափով, իհարկէ, ինչ չափով ինքը Խորհուրդը յենւում է կազմակերպուած ուժերի վրայ (*)

Դեռ աւելին: «Ազգային Խորհուրդը իր զօրամասերին պատուիրեց շղթայ կազմել քաղաքի հայկական մասի շուրջը պարապետի գծովը. որպէս զի նրանք ստիպուէին հրացանաձգութիւնը դադարեցնել և թալանչիներին ու աւարառուներին զրկեին քաղաքի հայկական մասից թուրքա-

*) Տես «Արև» 1918 № 63

կանը անցնելու հնարաւորութիւնից *):

Եւ որպէս զի այս կարգադրութիւնները ճշտիւ գործադրուին՝ Խորհուրդը մի առանձին Թռուցիկ էլ ցրուեց, որով յայտարարւում էր «որ այսօրուանից Բաքւի քաղաքապետութեան սահմաններում եղած բոլոր հայ ռազմական ույժերը, կանոնաւոր հայ զօրամասերը, ազգային կազմի մէջ մտնող կուսակցութիւնների զինեալ ույժերը, առանձին զինուած խմբերն և անհատներն պէտք է անպայման ենթարկուեն Ազգային Խորհրդի Բաքւի մասնաճիւղի հայ զինուորական Շտաբին։ Այս հրամանին չենթարկուողները կը պատժուին յեղափոխական ժամանակի ամբողջ խստութեամբ, իսկ որոշ դէպքերում նոյն իսկ հրացանազարկ կը լինին։

## Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ.

Ի մեծ դժբաղդութիւն Բաքւի հայ հասարակութեան մասնաւորապէս եւ Կովկասահայութեան ընդհանրապէս, Ազգային Խորհրդի այս գեղեցիկ կարգադրութիւններն առանց գործադրութեան մնացին, Հ. Յ. Դաշնակցութեան սովորական, գրգռչական արկածախնդրութեամբ։

Հէնց կռւի սկզբում նրա զօրամասերը՝ ոտ-

*) Տես «Արև» 1918 № 64



նակոխ անելով Խորհրդի կարգադրութիւնները մեծամասնականների կարմիր պահակների հետ միասին(*) ներս խուժեցին թաթարական թաղերն և յարձակման, սպանման և աւարառութեան ազդանշան իրանք ուին։ Իբրև ապացոյց դնում ենք այստեղ Դաշնակցական ջոջերից մէկի նամակի այն մասերը, որ մարտի դէպքերին են վերաբերւում։ «Երեք ժամ շարունակ ամեն կողմից սկսեցին նրանց (թուրքերին) կոտորել, և միևնոյն ժամանակ նրանց տները այրել։ Ոչ ոքին բաց չէին թողնում, այլ տեղն ու տեղը սպանում էին, իբրև գերի ընկածներ։ Սա ուղղակի սպանդանոց էր։ Փողոցներն դիակներով լիքն են։ Մասնորթների շարքը Նիկոլայեան փողոցից սկսած մինչև մէյդանը՝ ամբողջապէս հրդեհուած է։ Գոնձակի վրէժը առանք։—Սպանուած են 5-ից մինչև 10 յայանի մահմեդականներ։ Չէին խնայում ոչ երեխաների, ոչ կնանիքներին, ոչ էլ ծերերին,—ամէնքն էլ իրանց բաժինն ստացան։ Չհաւատաս իբր թե դաշնակցականները չեզօք դիրք են բռնել:

Նրանք ճանապարհները փակեցին, որպէսզի

*) Կարմիր բանակը կազմուած էր մասամբ տաճկական ճակատից վերադարձած և երկաթուղու գծի փակման պատճառով Բաքւում հաւաքուած հայ զինուորներից։

գիւղերից օգնութիւն չհասնի։- Այրեցին Համիդիէ և Իսլամիէ և վայրի դիվիզիայի բնակարանը, իսկ այժմ այրւում է «Մուսաւաթի» բիւրօն։ Թիւրքերի մասում ոչ մի անվնաս տուն չմնաց։ Թուրքական բոլոր տներն, խանութներն եւ մզկիթները կողոպտւած ու այրւած են... Մի Թուրքի տուն մտայ և տեսայ 30—40 սպանւած երեխաներ, կնանիք և տղամարդիկ։ Սպանւած Թուրքերի Թիւը 5—6 հազարի է հասնում։— Եթէ քամի չլինէր, կարող էինք սաւառնակներով բարձրանալ և ընդհանուր ուժով՝ բոլորովին էլ ծովը կը Թափէինք և կը վերջացնէինք։.... Լենքօրանը և Պետրովսկը վերցրած է. զօրքեր են ուղարկւած Շամախի, Հաջի Կապուլ։ Յոյս ունեմ, որ 20—25 օրից յետոյ, եթէ ոչ աւելի շուտ, Գանձակում կը լինենք. Թող Գանձակը փորձ ինչ դիմադրէ։.. Համազասպը մեծ քաջութիւն ցոյց տւեց և լաւ ջարդեց նրանց։ (*)

*) «Каспій» 1919 № 77։ Ես չկարողացայ այս նամակի բնագիրը ձեռք բերել։ Ասացին որ նա պահւած է մարտի դէպքերի արտակարգ քննիչ Թաթարական յանձնաժողովի գործերում, ուստի կնապիյ թերթից թարգմանեցի։ Նամակի հեղինակն է ոմն Թառայեան, որ Գանձակի Հայոց Ազգային Կոմիտեի կառավարիչ և ապա՝ Բագւի մեծամասնական կամիսար է եղել։ Ես պէտք է նկատեմ, որ նամակիս հեղինակը ոչ միայն պոռոտախօս վայրահաչ մէկն է, այլ և ստախօս. Թուրքերի տների, խանութների հրդեհման և սպանւածների Թւի մասին՝ պարոնի գրածների $^{3}/_{4}$ կատարեալ սուտ են, այլ ոչ սովորական չափազանցութիւն։—



Թառայեանի նման մարդու, իբրև մի անհատի, այս նամակի զօրութեամբ՝ ես ինձ չէի ներում մի ամբողջ կազմակերպութեան վրայ արատ դնել, բայց ահա Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնական օրգանը ինքն եւս իր բերանով խոստովանում է պարծենալով Թէ՝ «Խորհրդի իշխանութիւնը (մեծամասնական) իւր յաղթութեամբ կիսով չափ, եթէ ոչ աւելի պարտական է Հ. Յ. Դաշնակցութեան հզօր և անձնւէր պաշտպանութեան» (*)։

Դեռ սրանով էլ չբաւականալով՝ վերջերում երբ մեծամասնականների իշխանութիւնը տապալեց, Դաշնակցութիւնը իրան պարծանք և ձեռնտու համարեց աղաղակելու Թէ՝ «Դաշնակցութիւնը Բագւի միակ կուսակցութիւնն է եղել, որի անսպառ զինական ուժերի վրայ յենւած է եղել նախկին (մեծամասնական) կառավարութիւնը սկսած իր գոյութեան օրից մինչև խայտառակ անկումը (**)

Գալով կողոպտման և աւարութեան՝ դրանցում դաշնակցական զինւորներից շատերը՝ իրանց վարմունքով վատ օրինակ հանդիսացան քաղաքի հայ եւ ռուս զանազան խմբակների եւ անհատների, որոնք իրանց համար արհեստ չի-

*) «Արև» № 77

** Նոյնը № 154

նեցին թաթարներին կողոպտելին։

Դեռ այդ բաւական չէ, կողոպտիչների եւ աւազակների լրբութիւնը մինչև այն կէտին հասաւ, որ սկսեցին իրանց կողոպտած իրերն արձակ համարձակ ի վաճառ հանել քաղաքի շուկաներում և հրապարակներում։ Նոյն իսկ ոմանք կանայք գտնուեցին, որոնք իրանց ամուսինների կամ ազգականների թուրքերից խլած նրանց կանանց շորերն հագնել և փողոցներում մանգալն իրանց քաջասրտութեանը նշան համարեցին։– Այս եւ սրա նման խայտառակ տեսարանների հանդիպելիս, ես միշտ ասում էի՝ «հայեր, դուք այժմ քամի էք ցանում, բայց օր կուգայ, որ ստիպուած կը լինիք մրրիկ հնձել։

Բարեբաղդաբար՝ հակառակ այդ յեղափոխական համարուած այլասերուածների՝ հայ ժողովրդի մէջ գտնուեցին բազմաթիւ հայ ընտանիքներ, որոնք իրանց հարևան թաթարներին կամ իրանց փողոցներով այս ու այն կողմ փախչող թաթար կանանց և մանուկներին՝ տանում պատսպարում էին իրանց տներում, նրանց կերակրում, սիրաշահում, վիրաւորուածների վերքերը կապում հայկական գլխաւոր փողոցներում ձեռած կազմուած վիրաբուժական կայարաններում, ուր հայ բժիշկ ու բժշկուհի անհատներ, առանց խտրութեան օգնում էին ամէն մի վիրաւորի։—



Այս մարդկային պարտականութեան մէջ մեծ դեր կատարեցին նա և հայ սօցիալ դեմոկրատները և սօցիալ յեղափոխականներն, որոնք դաշնակցական զինուորների հետ միասին՝ շրջում էին փողոցներում և այնտեղերում կուչ եկած, հայերի տներում ապաւինած թաթարներին հաւաքում և նշանակուած հասարակական մեծամեծ շինութիւններում տեղաւորում էին, ուր նրանք կերակրւում էին Դաշնակցութեան հաշուով։ Այդպիսի թաթարների թիւը մինչև 12,000 հոգու հասաւ. որոց մեծագոյն մասը պարսկահպատակ դուրս եկան, և որոց Դաշնակցութիւնը յանձնեց պարսից հիւպատոսին։—

## ԹԱԹԱՐՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏԸ.

Բացի մարդկային զոհերից, որոց թիւր ենթադրւում է 1700 թաթար եւ 1200 հայ եւ ռուս, թաթարները մարտ ամսին նիւթական մեծ վնաս ունեցան։

Քաղաքացիական կռիւը վերջանալուց յետոյ՝ Գործադիր Կոմիտէի կարգադրութեամբ՝ Բագուի իւրաքանչիւր ազգի և հիմնարկութեան կողմից՝ կողոպուտները հաւաքող խմբակներ և անհատներ նշանակւեցին, որոնք տներից հանած և անհատների ձեռքներիցը խլած կողոպուտները

գետեղեցին այս ու այն շինութեան մէջ պահապանների հսկողութեան ներքոյ։ Յետոյ այս ամէնը հաւաքեցին Գործադիր Կոմիտէի շինութիւնում, ուր մի յատուկ յանձնաժողով ցուցակագրեց և հետզհետէ տէրերին յանձնեց։— Բայց որովհետև տէրերից ամէնքը չգտնուեցին կամ չճանաչուեցին, ուստի և իրեղէնների մեծ մասը մնաց մինչև Տաճիկներին Բագու մտնելը, երբ իրեղէնների մի մասը Տաճիկ պաշտօնեաները սեպհականացրին, մի մասն էլ նոր լոյս ընկած տեղական թաթար տէրերին յանձնուեցին։ Աւելորդ է ասել, որ ցուցակագրուած և գնահատուած իրերն կողոպուտների ճիշտ քանակը չեն ներկայացնում, և գուցէ ընդհանուր կողոպուտի քառորդ մասն անգամ չեն կազմում այն պարզ պատճառով, որ հաւաքող խմբակներն և անհատներն ոչ մի հնարաւորութիւն չունէին քաղաքի ամէն մի տունը մտնել և այնտեղ թագցրած իրերն որոնել։

Գալով յանձնաժողովի ցուցակագրած ու գնահատած իրեղէններին,—նրանց պատկերն այս է 1) թանկագին քարեր 300,000 ռուբլի արժողութեամբ. 2) զուտ ոսկեղէն իրեր 17 ֆ. 3) զուտ արծաթեղէն իրեր $8\frac{1}{2}$ փութ ծանրութեամբ. 4) պետական արժէքաւոր թղթեր 230,000 ռուբլու. 5) պղնձեղէն ամաններ 30



փութ. 6) 49 հատ ինքնայեռ (սամավար). 7) 20 հատ կարի մեքենայ. և 8) բազմաթիւ թանկագին և էժանագին գորգեր, կապերտներ, կաշուեղէններ, բահեզեայ հագուստեղէններ և այլն։— Յանձնաժողովի հաշւով այս ամենը գնահատուած է 2 միլիօն ռուբլու։—

Որովհետև կողոպտիչներն մեծ մասամբ անպատիժ մնացին, մասամբ էլ իշխանութեան աչքից վրիպեցին,— ուստի և կողոպտածն կարծես ունակութիւն դարձաւ։—

Մարտի քաղաքացիական կռւից հինգ ամիս յետոյ՝ այն է օգոստոսին, երբ «կարմիր բանակի» զինուորներն Անգլիացիների հետ կռւում էին կողք կողքի,— աւարառութիւններն չդադարեցին ի մեծ դայրոյթ և իգայթագդութիւն Անգլիացիներին, որոնք «կարմիր բանակի» վրայ իրաւասութիւն չունենալով՝ չէին կարող խիստ միջոցների դիմել։ Եւ այս հանգամանքից խրախուսուած՝ կողոպտիչները նորից հրապարակ եկան Բագուի շրջակայ թուրք գիւղերը աւերելու և թալանելու։—

Այս ամօթալի երևոյթը այնքան աչքի էր զարնում, որ նոյն իսկ Դաշնակցութեան պաշտօնական օրգանը ստիպուած եղաւ խոստովանել, որ «Հայ աշխատաւորութեան յեղափոխական կարմիր անունը ամենագարշելիօրէն արատաւոր-

ման վտանգի տակ է։ (*) Հայ աշխատաւորութիւնը իր անձնւիրութեամբ ու քաջութեամբ ազատեց մեր քաղաքը և ցոյց տւեց աշխարհին, որ նա հասունացած յեղափոխական է, բառի ամենալայն իմաստով։

Սակայն այսօր մեր աչքի առաջ դէպքեր են կատարւում, որոնք իրանց զզւելիութեամբ պատրաստ են մէկ անգամից վարկաբեկել Հայ աշխատաւորութեան և դաշնակցական մարտիկի կարմիր անուան փառքը, Մեր մարտիկների շարքերում խառնւել են վատահոգի թալանչիներ-բոյլ ու անպաշտպան կանանց ու երեխաների վրայ ձեռք բարձրացնողներ։ Դեռ մարտի դեպքերի ժամանակ նկատեց այդ զզւելի արատը. դեռ այն ժամանակ Հայ մարտական կազմակերպութիւնը ամենախիստ և կտրուկ միջոցներով խեղդեց (?!) հասարակական տականքների այդ զազրալի ընացքը, օրինակելի պատժի (?!) ենթարկելով աւազակ կողոպտիչներին։ Ինչպէս երևում է մոռացւել է այդ մեզնից շատ մօտիկ անցեալը, և այսօր նրանք նորից գլուխ են բարձրացրել, նորից իրանց զզւելի արարքով արատաւորում են ազնիւ և անձնւէր հերոսների անունը(**)։

*) Ընդգծումները միշտ իմն են։

**) «Արև» № 153



Ինչ ասել կուզի, որ Դաշնակցութեան այս ճառամարտն յօդւածը ոչ մի ազդեցութիւն չգործեց կարմիր բանակի վրայ, մինչև որ մեծամասնական իշխանութեան տապալումով և գեներալ Բագրատունու Զինւորական ծովային կամիսար նշանակւելով, Ցենտրո-Կասպիի գիկտատուրան ամենախիստ կանոններ սահմանեց զինւորների ուտրաուութեան և դասալքութեան վերաբերութեամբ։

Ափսոս, սակայն, որ այդ կարգադրութիւնն էս թղթի վրայ մնաց փոքրամասնականների իշխանութեան կեանքի կարճատևութեամբ։—

Յետ դառնանք մարտ ամսին։—

## ՌՈՒՍ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԽԱՂԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ·

Մեծամասնականների «Մուսաւատի» վրայ տարած յաղթանակը մարտ ամսին՝ Ազգային Խորհրդին և Դաշնակցութեան համար անսպասելի հետևանք ունեցաւ։ Մեծամասնականների իշխանութիւն էս՝ հետևելով ռուս միապետականութեան դարաւոր տակտիկային՝ փայփայում էր Խորհրդին և Դաշնակցութեանը՝ քանի որ կարիք ունէր նրանց աջակցութեանը, եւ, ինչպէս տեսանք, այդ աջակցութեան շնորհիւ

տաւելապէս յաղթութիւնը տարաւ։— Բայց հէնց որ կարիքը անցաւ, հէնց որ ինքը զօրացաւ ու հաստատուեց՝ իսկոյն սկսեց ճնշել, հալածել Խորհրդին՝ իպաշտօնէ, պահանջելով որ նա իր գոյութեանը վերջ դնէ։ Իսկ Դաշնակցութիւնից պահանջեց, որ իր զօրամասերը իրան, մեծամասնականների իշխանութեան տրամադրութեան տակը դնէ։ Եւ ազգային Խորհուրդն ու Դաշնակցութիւնը հնազանդեցին։

Ահա խորհրդի պատասխանը որ, տուեց մեծամասնական իշխանութեանը՝ «Հայոց Ազգային Խորհուրդը առաջ եկաւ գլխաւորապէս ճակատի պաշտպանութեան գործին նպաստելու համար։— Նա բնաւ իշխանութեան օրգան չէ. և յաւակնութեան էլ չունի այդպիսին լինելու։ Նա ոչ հետախուզութիւններ է արել և ոչ էլ մարդկանց բանտարկել։ Գալով բնակարաններ գաւթելուն,— реквизировать,— դա էլ եղել է Զին. և Նաւաստ Գործադիր Կոմիտէի թոյլտուութեամբ*)։

Ի վերջոյ Խորհուրդը խնդրում է իշխանութեանը ժամանակ և մարդիկ նշանակել Հայ զօրամասերն ստանալու համար։

Այս երևոյթը գոնէ ինձ համար զարմանա-

*) «Знамя Труда» № 32



լի չթւաց, որովհետեւ 200 տարուց ի վեր այսպէս է եղել ռուսների բռնած դիրքը դէպի հայերը։ Ցաւալի էլ չթւաց, որովհետեւ երբ գործող իշխանութիւնը ճիւղաւորւում է,— դրանով ընդհանուր գործը փտսւում է։ Եւ ես մեծամասնական չլինելով հանդերձ գտնում եմ, որ լաւ է մի իսկական սօցիալական իշխանութիւն ճանաչել, որպիսին է մեծամասնականներինը, քան միաժամանակ իրանց կոչումն ու նպատակը չճանաչող, եւ օրէնը մի անգամ իր գոյնն ու ուղղութիւնը փոխող իշխանութիւն, որպիսին եղել է մեր մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որի գործնէութիւնից ազգը բացարձակ փասներ է կրել միշտ, եւ պիտի կրէ, քանի որ նա կայ և դեռ շարունակում է իր գոյութիւնը։

Ինչպէս իր տեղում յիշել ենք, և ինչպէս Ազգային Խորհուրդը ինքն էս խոստովանում է՝ իր նպատակը ճակատը պաշտպանելն էր։ Միևնոյն նպատակով, և նրանից առաջ, հրապարակ նետուեց և Դաշնակցութիւնը։ Բայց բաւական չէ, որ իրանց նպատակին չհասան այլ նա և քաղաքացիական կուի ժամանակ մեծամասնականներին ցոյց տւած «հզօր պաշտպանութեամբ» մի նոր հարւած հասցրին Հայ ազգին,— սրա դէմ գրգռելով և լարելով ռուս ազգաբնակութեան գրեթէ բոլոր խաւերն անխտիր։—

Որովհետեւ ռուսները, իրանց յատուկ քաղաքական տհասութեամբ, այնպէս էին համոզուած, — և այսօր էլ այդ համոզմանն են, — իբր թէ «Մուսաւաթը» և առհասարակ մահմէտականները մեծամասնականների իշխանութիւնը տապալել էին ուզում Ռուսիայի և Ռուսների և նրանց օգտի համար։ — Եւ եթէ չէր լինի Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ այժմ մեծամասնականութիւնը ջնջուած կլինէր ոչ միայն Բագւում, այլ թերևս նա և ամբողջ Ռուսիայում։

Այս համոզումն ունենալով՝ շատ պարզ է, որ ռուս ազգայնականութիւնը այժմ յանձին Դաշնակցութեան խորթ, թշնամական աչքով է նայում Հայ ժողովրդի վրայ, և ամէն մի տեղի ու անտեղի առիթում անարգում և նախատում է նրան։ — Այս բանին մասամբ նպաստում է նա և այն հանգամանքը որ Բագւի մեծամասնական իշխանութեանմէջ շատ հայեր կային, եւ այդ իշխանութեան կենտրոնի արտակարգ ներկայացուցիչը Կովկասում Ստեփան Շահումեանը՝ ազգութեամբ հայ էր։

Մենք ռուս կառավարութիւնն ու ռուս ժողովուրդը, — բացի հատ ու կէնտ մասնաւորականներից, երբէք էլ բարեկամ չեն-նեղել Հայերի հետ, բայց այժմեան նման հակահայկական գիրք ուրիշ ժամանակ չեն բռնել, այժմեան



նման աշկարայ թշնամական վերաբերմունք ուրիշ ժամանակ չեն արտայայտել։

Այս երևոյթը լաւ բան չէ խոստանում մեզ։

Իր տեղում մենք կը տեսնենք, որ թեթևամտութեամբ մեծամասնականներին հետ միացող Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ աւելի մեծ թեթևամտութեամբ նրանից բաժանուելով՝ հիմի էլ ողջ Ռուսիայի մեծամասնականութեանը գենեց՝ այնտեղ ապաստան որոնող մօտ 200,000 հայերի դէմ, որոնք գուցէ մի գժբաղդ օր ստիպուած լինեն մարգարէի հետ աղաղակել թէ՝ «յերեսաց հիւսիոյ բորբոքեսցեն չարիք ի վերայ մեր» *)։

Դառնանք մեր նիւթին։

## ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Հայոց Ազգային Խորհրդի և Դաշնակցութեան իրաւասութեան տակ գտնուած զօրամասերն իր իշխանութեան ենթարկելուց յետոյ՝ մեծամասնական իշխանութիւնը ձեռնարկեց իր իշխանութիւնը Բագւի նահանգում տարածելու գործին։

Յայտնի է, որ Բագւի գաւառում, կամ քաղաքապետութիւնում հայկական գիւղ չկայ,

*) Երեմիա Ա. 11

այդ ողջ ազգաբնակութիւնը մահմեդական է։ Դրան իր կողմը գրաւելու համար՝ իշխանութիւնը այդ գիւղերը ագիտատորներ ուղարկեց։ Իսկ գաւառից դուրս եղած վայրերում, այն է, նահանգի միւս գաւառներում, ուր մահմէտականների հետ խառն ապրում են և քրիստոնիաներ,— ագիտատօրների հետ՝ նաև զինուորական մեծ ու փոքր վաշտեր ուղարկւեցին։

Բագւի գաւառը մեկնող ագիտատօրները՝ նախագահութեամբ ինժիներ Մաշադի բէկ Աղիգբէկովի ամենայն դիւրութեամբ իրանց միսիան կատարելով՝ վերադարձան՝ հետները բերելով գիւղացիների համախօսական վճիռներն, որոնցմով նրանք ընդունում էին թէ կենտրոնական և թէ տեղական (Բագւի) մեծամասնական իշխանութիւնը և խոստանում էին, զէն ի ձեռին, պաշտպանել նրան։ Ուստի և իրանց համար զէնք ու պարենաւորման նիւթեր էին խնդրում։։—

Իշխանութիւնը գիւղացիների խոստումները հալած իւղի տեղ ընդունելով՝ պարծանքով տպագրում էին նրանց համախօսականները իրանց պաշտօնական և կիսապաշտօնական թերթերում։ Միևնոյն ժամանակ՝ նրանց խնդիրները, հնարաւորութեան չափ, կատարում էին։

Այսպիսի յաջող ելք չունեցան սակայն քա-



ղաքապետութեան սահմանից դուրս գտնւած վայրերն, որոց քրիստոնեայ ազգաբնակութեան մեծ մասը կազմում էին հայերը, իսկ փոքր մասը՝ ռուսները։—

Քաղաքացիիկան կռւի ժամանակ Բագւից փախած և նախօրոք հեռացած մահմեդական խումբակներն ու անհատները Խաչմազ և Դարբանդ հասնելով՝ կարողացել էին տեղական մահմէդականներին գրգռել իրանց հարևան քրիստոնիաների և յատկապէս հայերի դէմ, իբր թէ վերջիններս ողջ Բագւի Մահմէտականներին կոտորել են, թէ՝ Բագւի Թուրքական թաղերի տները և հասարակական շինութիւնների վրայ իբր թէ քար քարի վրայ չէ մնացել, և այլ այսպիսի չափազանցութիւններ ու առասպելներ։—

Այս գրգռչական քարոզներով ոգևորւած՝ Դարբանդեցի մի խումբ մահմետականներ մարտի 21—24-ին յարձակւեցին տեղական հայերի վրայ և 72 հոգու մորթոտելով կողոպտեցին ու աւերեցին նրանց տներն ու մագազինները, ու մնացած Հայերն, ամէն ինչ թողած, մազապուրծ փախան Աստարխան և ուրիշ տեղեր՝ առասպելական վարձ վճարելով նաւակներին և մակոյկներին։—

Միևնոյն վիճակին ենթարկւեց Խաչմազ գիւղի հայ ազգաբնակութիւնը ևս, է որ սպան-

ւելով, և է որ փախչելով ծովով կամ թագնուելով մացառուտներում ու անտառներում։

Ղուբան և Ղուսարի աւանը երկաթուղու գծից բաւականին հեռու լինելով, Բագւից փախած գրգռիչներն այնտեղ չէին մտել։ Ուստի և այդ տեղերի սակաւաթիւ Հայերը թողնուած էին իրանց բազմաթիւ մահմեդական հարեւանների բարեհաճութեանը։—

Ի պատիւ վերջիններիս պէտք է արձանագրենք, որ սրանց գլխաւորները որոշեցին, որ մինչեւ Բագւից իրանց հասած լուրերի ստուգուիլը՝ ոչ միայն ձեռք չտալ իրանց հարեւան Հայերին, այլ ընդհակառակը նրանց հովանաւորել տեղական թիւրք խուժանի դէմ։—

Փոխադարձ խորհրդակցութիւնից յետոյ՝ նրանք Ղուբայի Հայերին զետեղեցին քաղաքային բանդում, որ շատ ընդարձակ շինութիւն է, իսկ Ղուսարի 38 հայերին՝ աւանի մի մեծ շինութիւնում, կանանց վերնայարկում, իսկ արդամարդկանց ներքին յարկում։— Ինչպէս Ղուբայի բանդի, նոյնպէս և Ղուսարի շինութեան վրայ՝ պահապաններ կարգուեցին պատսպարուածներին պաշտպանութեան համար։—

Պահապաններ կարգուեցին նմանապէս և Հայերի տների և մագազինների վրայ, թէպէտ և դրանց մի մասը՝ այնու ամենայնիւ՝ կողոպ-



ւեցին թուրք տականքների ձեռքով։

Երկու անգամ թուրք խուժանը փորձեց յարձակում գործել Հայերի վրայ. սակայն երկու անգամն էլ մահմէտական հոգեւորականութիւնը Ղուռանը ձեռին և շրջապատուած թուրք գլխաւորներով՝ ցրեց խուժանին։

Պատսպարուած, կամ եթէ ուզում էք՝ բանտարկուած հայերը կերակրւում էին ամէն մէկը օրական կէս ֆ. հաց ստանալով։

Մի քանի օրից յետոյ Ղուբա հասաւ՝ այսպէս կոչուած Համազասպի բրիգադայի մի վաշտը՝ օգնականի առաջնորդութեամբ, որի գալստեամբ հայերն բանդից բաց թողուեցին։

Այժմ էլ թուրքերը դիմելով հայերին խնդրեցին հովանաւորել իրանց հայ «ամկարների» դէմ։— Մեծ մասով հայերը թիւրքերի մի մասին վերցրին տարան իրանց բնակարաններն, միւս մասն էլ հայկական մասի ապահով հահով համարուած բնակարաններում զետեղեցին։

Պէտք է ասել, որ հայ զօրքերն էլ մեծ մասամբ լաւ դիրք բռնեցին դէպի թուրքերը, եթէ չյիշենք մի քանի զինուորների յիմար և մեծախօս սպառնանքներն, ու այս ու այն յափշտակութիւնը։

Դրութիւնը այսպէս լինելով՝ լաւ կը լինէր ի հարկէ, եթէ հայկական վաշտը հեռանար Ղու-

բայից, սակայն նա մնաց յանուն հայերի պաշտպանութեան, բայց՝ ինչպէս այնտեղ մեծամասնական իշխանութիւնը հաստատելու նպատակով։— Այս առաջարկը Թուրքերին հաճելի չթուաց։

Մի քանի օրից յետոյ՝ քաղաքի հեռաւոր ծայրում Թիւրք հեծելազօրների մեծ խումբ երևաց՝ ոտքից գլուխ զինուած։—

Հայկական վաշտը լեղապատառ՝ փախուստի ճամբան բռնեց, խորհուրդ տալով Հայերին հետևել իրանց, եթէ միայն ցանկանում են։

Եւ հայերը մեծ թէ փոքր, կին, երեխայ փախչող զինուորների քամակն ընկան վազ տալով, շնչասպառ. լալագին։

Մինչ այս, մինչ այն, Թուրք ձիաւորների խումբը քաղաք մտնելով սկսեց հրացանների գնդակների տարափ թափել փախչողների վրայ։ Տարափից ազատ մնացին հայ զինուորներն, իսկ փախչող ժողովուրդը, ամենամեծ մասամբ, կոտորուեց անիծելով.— ինչպէս ականատեսներն են պատմում,— Համազասպին էլ, նրա օգնականին էլ։

Գալով Բէլվար գիւղի հայ համայքին, նա միանգամայն ազատ մնաց որևէ, և որքան և իցէ հարուածից՝ յատկապէս տեղական Համաուլլա Էֆէնդի Էֆէնդիևի եռանդուն պաշտպանութեամբ։



# ՇԱՄԱԽՒՈՅ ԴԷՊՔԵՐԸ

Բոլորովին տարբեր պատճառներով ծագեցին Շամախւոյ Հայերի և Թուրքերի,— որոնք մեծ մասամբ սիւննի են,— ընդհարումները և նրանց փոխադարձ կոտորածը, որ շատերի համար անսպասելի էր այն պարզ պատճառով, որ նրանք միշտ սիրով և համերաշխութեամբ են ապրել միմիանց հետ։ Կովկասում մի քանի անգամ տեղի ունեցած Թիւրիմացութիւնների և անկարգութիւնների միջոցներին՝ Շամախւոյ և նրա ու Գեօքչայի գաւառների հայ և Թուրք ազգաբնակութեան համերաշխ գոյութիւնը միշտ անփոփոխ և անսասան է մնացել։

Այս ուրախալի երևոյթը պէտք է վերագրել ինչպէս Թուրք, նոյնպէս և հայ հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչների բարեմտութեանն ու խոհեմութեանը։

Այս անգամ, դժբախտաբար, պատկերը փոխուեց։ Եւ փոխուեց ոչ եթէ ներքին, այլ արտաքին և զուտ քաղաքական բնաւորութիւն ունեցող ազդեցութեամբ։

Իր տեղում ես յիշել եմ, որ Կովկասի մահմէտականութիւնը՝ Տաճկական օրիանտացիայի կողմն էր հէնց պատերազմի ծագած օրից ի վեր։ Ասել եմ որ իրենց այդ ցանկութիւնը

Թուրքերը չէին արտայայտում՝ այլ շարունակ հետևում և սպասում էին պատերազմի ընթացքին։—

Ռուսները, նրանց հետ և ընդհանրապէս մենք Հայերս, շատ խորթ աչքով ենք նայում Կովկասեան մահմեդականութեան այս ցանկութեան վրայ։ Մինչև իսկ նրանց այդ առթիւ դաւաճան ենք անւանում։—

Ռուսների այդ կերպ մտածելը՝ շատ հասկանալի է։ Բայց երբ Հայերս էլ՝ Ռուսների նման ենք դատում ու դատապարտում Թուրքերին, այդ ոչ միայն զարմանալի է, անարդար, այլ նա և հակասական։—

Եթէ մենք 6—7 հարիւր տարուց ի վեր Տաճկաստանի տիրապետութեան տակ եղած մեր Հայաստանը ազատելու համար՝ ոչ մի ջանք ու զոհաբերութիւն չենք խնայում, ինչո՞ւ միևնոյն իրաւունքը չպիտի վայելեն Կովկասի Թուրքերը՝ հազիւ մի դար առաջ իրանց ձեռքից դուրս եկած իրանց հայրենիքը՝ Ռուսների ձեռքից ազատելու համար։— Եթէ կարծում էք, որ Հայերիս համար Ռուսական օրիանտացիան օգտակար է, ինչո՞ւ նոյն կարծիքը ունենալ արգելում էք Թուրքերին Տաճկական օրիանտացիայի նկատմամբ։—

Եթէ Հայերս գտնում ենք, որ Տաճիկների



տիրապետութեան տակ մենք ճնշւում ենք և հալածւում, միևնոյնը գտնում են Թուրքերը Ռուսների տիրապետութեան տակ։—

Թողնենք այս վիճելի խնդիրը մեր սաղերին չգրգռելու համար։

Գերմանիայի յաջողութիւնները՝ նա մանաւանդ պատերազմի սկզբնական շրջաններում, նրանց խոստումներն՝ էլ աւելի հրահրեցին Թուրքերի ազգային—հայրենասիրական եռանդը, որը հետզհետէ բորբոքւեց ու արծարծւեց Տաճկաց էմիսարների գաղտնի ու յայտնի ներգործութիւններով։ Իսկ էմիսարներ եկան ոչ միայն Տաճկաստանից, այլ նրանք կային նա և Բագւում,— Նարգէն կղզիում գտնւած Տաճիկ գերիների մէջ, որոնք կաշառքով կամ զանազան միջոցներով կղզուց ազատւելով՝ ցրւեցին Բագւում և Անդրկովկասեան այլ և այլ քաղաքներում եւ սկսեցին իրանց միսիան կատարել։ Փաստ է, որ Բագւի փողոցներում մըրգեղէն ու բանջարեղէն վաճառող Թուրքերի թւում տաճիկ էմիսարներ էլ կային։

Արդ՝ Օսմանեան կառավարութեան այդ էմիսարներն էին, որոնք բացի իրանց անմիջական պարտաւորութիւններից, այլ նա և դրամական նպաստներ էլ էին հաւաքում յատուկ անդորրագրերով։—

Անգորրագրերի վրայ նկարուած է Օսմանեան դրօշակը կարմիր կիսալուսին, աստղերով։ Անգորրագրերի երեսների եւ լուսանցքների վրայ մակագրութիւններ կան։

«Տաճկաստանի Միութիւն եւ Յառաջադիմութեան Կուսակցութիւն»։

«Իսլամական Միութիւն». «Մեծ Թիւրքիա»։

«Ո՜վ Թուրքեր զարթնեցէք,
Դուք էլ իրաւունք ունէք.
Աշխարքից մի բաժին ունէք.
Կազմակերպուած մի մարմին ունէք.
Միութիւն արէք ձեր մէջ»։—

Յետոյ գալիս է Ղուրանից մի հատուած, որ ես չկարողացայ թարգմանել տալ։

Ապա գալիս են հետեւեալ տողերը «Այս ինչ անձից ստացուած է 133 թւականի (հէջրիտի) տարեկան անդամավճարը 5 ռուբլի.(*)

*) Թէ և իմ ձեռքը չէ անցել, բայց հաւանական է, որ այս անգորրագրերից առաջ՝ Կովկասի մահմէտականութեան մէջ տարածուած է եղել և այն ընդարձակ կոչը, որ հազարաւոր օրինակներով ցրուած են եղել Պարսկաստանի յեղափոխականները՝ հրաւիրելով իրանց կրօնակիցներին միանալու Օսմանցիներին՝ ընդդէմ Ռուսիայի և Անգլիայի։—

Յանկացողները կարող են այդ կոչը կարդալ 1918-ին հրատարակուած «Ջեթենի» ժողովածուի 496—500 երեսներում։—



Որքան Ռուսաստանը թուլացաւ, այնքան կովկասեան մահմեդականութիւնը սիրտ առաւ և ոգեւորւեց այն աստիճան, որ Շամախիում, օրինակի համար, ազգային զօրքերի վարժութիւնների ժամանակ զինւորները կատակախառն ժպիտով ասում էին՝

«Բիր, իքի,
Կավկաս բիզիմքի»։—

Բաքւի քաղաքային Դումայի իրաւասու, ազդեցիկ Մուսաւաթականներից մէկը՝ քաղաքագլխի կաբինետում մասնաւոր խօսակցութեան մէջ՝ բացարձակ յայտնեց, որ Կովկասը պատկանելու է Թուրքերին, Վրացիներին և Հայերին։—

Միեւնոյն միտքը 1917 թւին ամառը՝ հանքային ջրերում մի քանի յայտնի Թուրք մտաւորականներ հրապարակաւ յայտնել էին հայերին, աւելացնելով որ եթէ նրանք արգելք լինեն Թուրքական այս ծրագրին և սկսեն, բառ ավորականին, պաշտպանել Ռուսներին,— ապա առաջին եւ գլխաւոր տուժողը իրանք կը լինին։-

Ի վերայ այսր ամենայնի՝ Շամախւոյ Հայերի եւ Թուրքերի խաղաղ յարաբերութիւնը, շարունակւում էր մնալ նոյնը։— Այդ բանին մեծապէս նպաստում էր նա մանաւանդ Շամախւոյ ախունդը՝ Մուստաֆա էֆէնդին, որին

ազդեցութիւնը շատ մեծ է իր կրօնակիցների վրայ, և որի հայրը ժամանակին՝ հաճի Մէճիտը, մինչեւ իր մահը, միշտ յարգելի եւ պատկառելի է եղել, նոյն իսկ բոլոր քրիստոնեաների աչքում, իր խաղաղասէր և անաչառ բնաւորութեանը համար:—

## ԹՈՒՐՔ ԵՒ ՀԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԼԱՐՈՒՄԸ.

Ռուսական զօրագնդերի ցրման ու ռազմաճակատի բաց մնալու հէնց սկզբում, մի օր Մուստաֆա էֆէնդին յանկարծ Թիֆլիս հրաւիրուեց Կովկասեան Կոմիսարիատի անդամ Ջաֆարովի կողմից:—Այնտեղ նրան նշանակեցին Անդրկովկասեան մուֆտի:—

Բանը նրանումն է, որ Ռուս զօրացրւածիւ Կովկասեան զօրաբանակի հրամանատար Իւտենիչ գեներալը՝ Թիֆլիսում այդ օրերում մի գաղտնիզինւորական ժողով էր ունեցել, ուր ի պաշտօնէ յայտարարել էր, որ այլ ևս անկարելի է Տաճկական ճակատը պաշտպանել, և ինքը պաշտօնից հրաժարուելով՝ հեռացել էր Կովկասից: Նրա պաշտօնը գեներալ Պրժեվալսկին ստանձնեց: Այդ միջոցին էր ահա, որ Լենինի կարգադրութեամբ ճակատի պաշտպանութեան



գործը Հայերին յանձնուեց գեներալ Բագրատունու ղեկավարութեամբ:—

Շամախւոյ Թուրքերի և Հայերի յարաբերութեան լարումը՝ սկսւում է Մուստաֆա մուֆտիի Թիֆլիսից վերադառնալուց և հայկական կորպուսի հարցը հրապարակ գալուց անմիջապէս յետոյ:— Լարման առիթ տւողը հետևեալ դէպքն է լինում:

Շամախու գարնիզօնը բաղկանում էր հայ և ռուս զինւորներից:

Սրանք լսելով որ ճակատում ռուսաց բանակը ցրիւ է եկել, անմիջապէս վերցնելով իրանց զէնքերը՝ հեռացան Շամախուց.

Գարնիզօնի պետը ռուս էր: Կովկասեան Կոմիսարիատի կարգադրութեամբ՝ հեռացող պետին փոխարինեց Պետր Արտամանով ազգանունով մի մալական, որ Զաբանի, կամ Նիկոլայեվսկի գիւղի դպրոցի ուսուցիչն էր. և պահեստի սպայ:—

Շամախւոյ Թուրքերն պահանջեցին նախ՝ որ գոնէ նոր գառնիզօնի մէջ Թուրք զինւորներ ևս լինին՝ պատճառաբանելով որ գաւառի 130,000 մահմէդականութիւնը ևս օգտւի այն իրաւունքով, որով օգտւում է 32,000 քրիստոնեայ ազգաբնակութիւնը, և երկրորդ՝ հեռացող զինւորներից հրացաններն յետ վերցնւին, որ

տեղի ունեցաւ Ազատ կոչուած խճուղու կայարանում։

Երբ զինուորները երկաթուղու Քիւրդամիր կոչուած կայարանն հասան՝ Ազատում իրանցից վերցուած զէնքերի փոխարէն՝ կողոպտեցին տեղական ցէյխաուզը և բաւականին ռազմական մթերք վերցրած հեռացան՝ մեկնեցան դէպի Թուսխա, Շամախեցի Նիկոլայ Իվանեան հայ սպայի ղեկավարութեամբ։

Այս անցքը Քիւրդամիրից հեռագրով յայտնում են Շամախւոյ կամիսար Ազատ բէգին, որ՛ ի պաշտօնէ յայտնում է քաղաքային դումայի նիստում։

Շամախւոյ Թուրք հասարակութիւնը յուզւում է, սակայն կոմիսարը և մուֆտին խաղաղացնում են՝ Արտամոնովին հեռացնելով և նրա պաշտօնը Թաղլան բէգ Ալիարբէգովին յանձնելով։ Թուրքերի այս կարգադրութիւնը՝ Կովկասեան Կոմիսարիատը հաստատում է։

Արտամոնովը Թուրք գործիչներից վիրաւորուած՝ մաքումը գնում է վրէժ լուծել հայերի միջոցով։ —



# ՇԱՄԱԽԵՑԻ ՀԱՅ ԶԻՆՒՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Այդ միջոցին Բագու էին հաւաքուած ռուսական ցրուած բանակի Շամախւոյ, և նրա շրջակայ գիւղերից եղող հայ զինուորների մի փոքրիկ խումբ։ Արտամոնովից ստացուած հրացաններից մի մի հատ վերցնելով՝ նրանք խաղաղ և ապահովաբար հասան իրանց գիւղերն։

Սակայն հետզհետէ Բագու եկան և նոր զինուորներ նոյն գիւղերից։ Դրանցից կազմւեց հայրենիք վերադարձող հայ զինուորների երկրորդ խումբը, թւով մի քանի հարիւր հոգի։

Երկիւղ կրելով ճանապարհի էքսցեսներից և բարդութիւններից՝ Բագւի Հայ և Թուրք Ազգային Խորհրդների կողմից Շամախի հեռագրւեց ում հարկն է, որ հայ զինուորներին, իբրև իրանց հրացաններով հայրենիք մեկնող խաղաղ զօրամասի դէմ՝ ոչ մի թշնամական ցոյց չկատարւի, այլ թոյլ տրւի, որ ամեն ոք գնայ իր գիւղը, իսկ ճանապարհին որ և պատահարի չհանդիպելու համար՝ Ազգային Խորհուրդները որոշեցին որ խումբը Շամախի մեկնի Թուրք պատգամաւորների ուղեկցութեամբ։

Դժբաղդաբար զինուորները առանց սպասելու պատգամաւորութեանը՝ ինքնագլուխ ճա-

նապարհ ընկան։ Եւ փոխանակ խմբովին Քիւրդամիր և այնտեղից Շամախի հասնելու և այնտեղից իրանց գիւղերն մեկնելու՝ Փաստր կիսակայարանից ցրիւ եկան և անկազմակերպ, մէկ մէկ, կամ մի քանի ընկերներով մեկնեցան իրանց գիւղերը։--

Ճանապարհին հանդիպած թուրքերի հետ՝ նրանք ընդհարում ունեցան և 10 հոգի զոհ տուին։(*)

Հետզհետէ Բագու հասան Շամախւոյ գաւառի Մացրոդ զինուորների հետ՝ նա և Գեօքչայի ու Նուխւայ գաւառի զինուորներն։—

Դրանցից կազմուեց հայրենիք մեկնող երկրորդ խումբը, որ նախորդներից տարբերւում էր իր բազմութեամբ։ 1300 հոգի էին, և բացի մի քանի տասնեակ մալականներից, մնացածները հայեր էին։— Այս խմբի մեծաւոր կամ առաջնորդ կարգուեց Պետր Արտամանով, իսկ սպաներն էին տեղացի հայ երիտասարդներ,— Աղասի Հայրապետեան, Յովհաննէս Ջանումեան, Արդէմ Դոլեան և Ղազարեան։

Բագւի Ազգային Խորհուրդը և Շամախեցի-

*) 1917 թւի դեկտեմբերի սկզբից մինչև մարտի 14-ին այլ և այլ դէպքերում, և այլ և այլ տեղերում սպանուած հայերի թիւն է, բացի այս 10-ից, նա և 53 հոգի, իսկ թուրքերինը՝ 75 հոգի։



ների հայրենակցական Միութիւնը հակառակ էին այսքան բազմութեան միասին գնալուն՝ սակայն մեծամասնականների իշխանութիւնը, որի ներկայացուցիչն էր Պետր Արտամանովը, ոչ միայն թոյլատրեց, այլ և երկու հատ էլ թնդանօթ դրեց խմբի տրամադրութեան տակ։—

Խմբի բուն նպատակը՝ անդամների անփորձ հայրենիք վերադառնալն էր, սակայն Բագւի իշխանութիւնը պարտաւորել էր Արտամանովին՝ մեծամասնականների իշխանութիւնը տարածել գիւղերում։

Խումբի մեկնելուց յետոյ՝ Բագւի Հայոց և Թուրքաց Ազգային Խորհուրդները անմիջապէս հեռագրեցին Շամախւոյ հայ և թուրք գործիչներին, և խնդրեցին ամէն զգուշութիւն և խոհեմութիւն գործ դնել, որ ճանապարհին կամ Շամախիում որևէ էքսցէս չպատահի։—

Շամախուց իսկոյն պատասխանեցին, աղաչելով խմբի առաքումը յետաձգել, կամ գոնէ առանց թնդանօթի։—

Պատասխան ուղարկւեց թէ՝ դա անկարելի է, որովհետև խմբի առաքումը և զինումը՝ եղել է իշխանութեան կարգադրութեամբ, որը փոխել տալու իրանք անկարող են։

# ՇԱՄԱԽՒՈՅ ԹՈՒՐՔԵՐԻ ՅՈՒԶՈՒՄԸ

Այս պարագան մեծ մտատանջութիւն ու յուզում առաջ բերեց Շամախւոյ Թուրքերի մէջ. մանաւանդ խմբի թիւի և նրա զէնքի քանակութեան մասին մութ ույժերը՝ չափազանցեցրած լուրեր են տարածել քաղաքում և գիւղերում, որտեղից արդէն Թուրքերն սկսել էին խումբ խումբ քաղաք գալ՝ իբրև օգնութիւն իրանց կրօնակիցներին։

Շամախւոյ թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոսը և Անդրկովկասեան մուֆտի Մուստաֆա էֆէնդին՝ գալիք չարիքների առաջն առնելու համար՝ տեղական հայերից և Թուրքերից մի խաղաղարար յանձնաժողով կարգեցին, որ իսկոյն ձեռնարկեց պաշտօնի։ Սակայն «բոլշեւիքական ասքեարների» քաղաքին մօտենալու լուրը մի կողմից, և գիւղերից Շամախի եկած Թուր. կողոպտելու և սպանելու ախորժակի գրգռւիլն միւս կողմից՝ խաղաղարար Յանձնաժողովի աշխատանքներն ջլատում էին անդադար։ Որոշւեց որ Յանձնաժողովը իր հոգևորականնախագահներով՝ Մարաղա գիւղում դիմաւորէ խմբին և խնդրէ, որ քաղաք չմտնի, այլ այնտեղից ամէն մի գիւղի զինւոր մեկնի իր գիւղը իր համագիւղացիների հետ։



Գալով թնդանօթներին՝ դրանք էլ քաղաք չբերւին առ այժմ, այլ մի քանի օրից յետոյ, և եթէ կարելի է, գիշերը, մթնով։

Յանձնաժողովը Մարաղա հասնելով՝ տեղեկացաւ, որ զօրքը արդէն Խիլմիլի գիւղն է մեկնել։—

Չնայած յոգնածութեան և գիշերւայ մթութեան՝ Յանձնաժողովը անմիջապէս Խիլմիլի մեկնեց, ուր և հասաւ լուսաբացին։ Երկար տեւեց Յանձնաժողովի և Արտամանովի մէջ եղած բանակցութիւնը։

Մի քանի որոշում կայացաւ։ Բայց ապարդիւն, առաւելապէս զինւորների միջամտութեան պատճառով։(*) Ամենավերջին որոշումն այն եղաւ, որ զօրքը խմբովին քաղաք չ'մտնի, այլ նրա կողքերով ամէն ոք՝ իր համագիւղացիների հետ անցնի գնայ իր գիւղը։

Յանձնաժողովը վերադարձաւ Շամախի։ Քաղաքին մօտենալիս՝ նա զարմացմամբ տեսաւ, որ քաղաքի շուրջը, մի քանի կողմերում, խրամ-

*) Այդ զինւորների մէջ կային բաւականին Շամախեցի հայ հասարակաւոր օղեվաճառներ և գինեվաճառներ, որոնք Բաքւում իրանց ապրանքը առասպելական գներով վաճառելուց յետոյ՝ այժմ խառնւել էին զինւորների հետ, և իբրև այդպիսիներ, յետ էին դառնում ապահովաբար։

ներ են փորուած և նրանց մէջ արդէն զինուած թուրքեր են նստոտած։

Յանձնաժողովի պահանջմամբ մօտակայ խրամներում նստած թուրքերն իսկոյն դուրս եկան և ցրուեցին։

Քաղաք մտնելիս՝ Յանձնաժողովի զարմանքը տագնապի փոխուեց, տեսնելով հազարաւոր զինուած թուրքեր Մուֆտիի տան շուրջը հաւաքուած՝ նրա գալստեան են սպասում։ Միւս կողմից, Շամախւոյ մի բուռ հայութիւնը՝ մահուան երկիւղի տակ նոյնպէս Յանձնաժողովի վերադարձին էր սպասում փողոցների անկիւններում կուչ եկած, շուարած։—

Յանձնաժողովը ձեռաց մի նիստ ունեցաւ Մուֆտիի տանը, ուր հաւաքուած էին Շամախւոյ թուրք համայնքի յայտնի վաճառականները ամէնքն էլ խաղաղ տրամադրուած։—

Յանձնաժողովի բացատրութիւնը նրանց գոհացրեց և ամէնքն էլ խոստացան իրանց ձեռքից եկած ամէն միջոց գործ դնել՝ թուրք խուժանին խաղաղացնելու և զսպելու համար։— Հայոց եպիսկոպոսն էլ երաշխաւորեց թէ՝ զօրքը՝ իր խոստմանը հաստատ մնալով՝ քաղաք չի մտնել խմբովին։—

Ըստ երեւոյթին ամէն բան լաւ անցաւ և քաղաքը իր սովորական խաղաղ կերպարանքն



ստացաւ։— Մարդիկ սկսեցին ազատ շունչ քաշել։— Խաղաղարար Յանձնաժողովը արթնութեամբ հսկում էր, որ կարգն ու խաղաղութիւնը չխանգարուի։—

Սակայն երկու օրից յետոյ՝ երբ զինուորների խումբը քաղաքի հեռաւոր ծայրում երեւացաւ՝ այնտեղից գիւղերն ցրուելու համար՝ թուրք խուժանը ոտքի կանգնեց,— մութ ոյժերի դրդմամբ արդեօք, թէ ինքնապաշտպանութեան բնազդմամբ, յայտնի չէ։

Առանց ուշադրութիւն դարձնելու կողմնակի մարդկանց և Խաղաղարար Յանձնաժողովի յորդորներին, և սպառնալիքներին, խուժանը յարձակուեց քաղաքի գարնիզոնի վրայ և երկու զինուորի սպանելով՝ պահեստանից դուրս բերեց և բաժանեց 250 հրացան և 114,000 փամփուտ։

Հրապարակ եկան մուֆտին, եպիսկոպոսը, քաղաքագլուխը, քաղաքի և գաւառի կօմիսարները և ազդեցիկ թուրք ու հայ մասնաւոր անհատներ, և թոյլ չտուին, որ խուժանը իր չար բնազդումներին լիակատար ազատութիւն տայ։—

Խաղաղութեան և հաշտութեան թափօր կազմուեց, որ սկսեց քաղաքում շրջել և սէր ու հաշտութիւն քարոզել։ Միևնոյն ժամանակ Խաղաղարար Յանձնաժողովի բոլոր անդամների ստորագրութեամբ կոչեր ցրուեց ժողովուրդի

մէջ։ Կամաց կամաց կրքերն սկսեցին հանդարտացող և երկիւղն ու տագնապը՝ վերանալ։—

Այստեղ պէտք է ասել, որ այդ օրերում մարտի 14—17-ին, թէ և Բագւում բուռն կերպով սկսւած էր քաղաքացիական կռիւր, սակայն հեռագրական թելերի կտրւած լինելու պատճառով Շամախում մարդիկ բարեբախտաբար ոչ մի տեղեկութիւն չունէին այդ մասին։— Ասում եմ բարեբաղդաբար, որովհետև եթէ Շամախւոյ Թուրքերը լսած լինէին թէ Բագւում կռիւ կայ և Հայերն մեծամասնականների կողմն են անցել, — Շամախւոյ և գաւառի բոլոր հայերին ձեռաց կըկոտորէին, իրանց թւի աւելութեամբ և ոտքից գլուխ զինւած լինելով։ Ես արդէն ասել եմ, որ հարիւր վաթսուն հազար թուրքութեանը չէին կարող դիմադրել 32,000 քրիստոնեաները, որից 10,000 էլ մալականներ էին և չէզոք դիրք կըբռնէին անշուշտ։

## ԱՐՏԱՄԱՆՈՎԻ ԽՈՍՏՄՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ

Մարտի 16-ին վաղ առաւօտեան լուսածագին՝ Մուֆտին մի մարդ է ուղարկում Բագրատ եպիսկոպոսին, յայտնելու թէ զօրքերը, ճիշտ է քաղաք չմտան, սակայն նրա կողքում



անցկենալով՝ փոխանակ ցրւելու, ընդհակառակը, կենտրոնանում են Մադրասայի մէջ, որ իր բարձր դիրքով իշխում է քաղաքի վրայ, թէ այդ դիրքից թնդանօթների բերանները Թուրքական մասի վրայ են ուղղւած։—

Եպիսկոպոսը իսկոյն առաջնորդարանի կտուրը բարձրանալով՝ տեսնում է, որ Մուֆտիի հաղորդած լուրը ստոյգ է։

Անմիջապէս մի քանի յայտնի հայերին քնաթաթախ անել տալով՝ Մադրասա է ուղարկում։ Ինքն էլ Մուֆտիին միամտեցուցիչ լուր ուղարկելով՝ սպասում է նրա մարդու վերադարձին, որպէս զի նրա հետ միասին Մադրասա մեկնի։

Բայց Մուֆտիի մարդն դեռ չվերադարձած՝ Մադրասա ուղարկւած Հայերն հետ են գալիս յայտնելով որ Մադրասայի սահմանագլխին կանգնած հայ սպայ Ջանումեանը, և նրա թիկնապահ զինւորներն՝ չեն թոյլ տալիս առաջ գնալու, թէ՝ զօրքի հրամանատարութիւնը ցանկութիւն չունի որ և է բանակցութեան մէջ մանելու ում և իցէ հետ։ Սակայն ի վերջոյ զիջանելով պատգամաւորների՝ արտասուախառն աղաչանք ու թախանձանքներին՝ Հայ սպան՝ յօժարւում է մուֆտիի և եպիսկոպոսի հետ, բանակցել, պահանջ դնելով որ դրանք անձամբ

ներկայանան իրան եւ իրանով՝ գործի հրամանատարութեանը:—

Մուֆտիի տանը գտնւող քաղաքագլուխը՝ լսելով հայ սպայի պահանջը ասում է «Ռուսաստանում շատ քաղաքներ կործանւեցին և հազարաւոր ու բիւրաւոր անմեղ մարդիկ կոտորւեցին. Թող դրանցից մէկն էլ Շամախին և նրա ազգաբնակութիւնը լինի, միայն թէ ամբողջ Անդրկովկասի հոգևոր պետը ստիպւած չը լինի մի որ և է լիրբ, խոստմնազանց սպայի ոտքը գնալու։

Բայց մինչև այդ՝ Բագրատ եպիսկոպոսը մուֆտիի մարդուն հետ,— որ իր ապահովութեան համար միշտ ձեռքին սպիտակ դրօշակով էր գալիս ու գնում հայկական մասը,— շտապում է Մագրասա, որի սահմանագլխում կանգնած էր Ջանումեանը իր զինւորներով։ Դեռ եպիսկոպոսի ողջոյնը չընդունած մեծամիտ հայ սպան՝ հրամայում է զինւորներին, որ եպիսկոպոսին ուղեկցող Թուրքի աչքերը կապեն։ Եպիսկոպոսը սպայի վարմունքի անտեղութիւնը շեշտելով՝ յայտնում է, որ մուֆտիին անձամբ ներկայանալու առաջարկը միանգամայն աւելորդ է։ Թէ ինքը ոչ նոր բանակցութեան ըսկսելու համար չի եկել, այլ միայն յիշեցնելու Ախմիլի գիւղում ընդունւած որոշումը և նրա գործադրութիւնը խնդրել, թէ՝ ինքը մուֆտիի



և Թուրք հասարակութեան հանդէպ՝ երաշխաւոր է եղել զինւորութեան կօրէկտութեան և խոստմնապահութեան նկատմամբ։

Սպան արհամարական ձայնով պատասխանում է, որ լաւ կանի եպիսկոպոսը թէ իրան չվերաբերեալ գործերի մէջ չը մտնի, թէ՝ Թուրքերի կողմից գարնիզօնի վրայ յարձակւելն ու երկու զինւորի սպանելն անպատիժ չթողնելու արդէն որոշում է կայացրած գործի հրամանատարութիւնը։—

Բագրատ եպիսկոպոսը յետ է դառնում։ Քիչ անցած սկսւում է Թուրքական թաղի ռմբակոծութիւնը Մագրասայի բարձունքներից։ Տեղ տեղ հրդեհների բոցեր էլ են երևում և փախուստի ճամբան բռնող Թիւրք ժողովրդի, մանաւանդ կանանց և երեխաների, լացի ու աղաղակի ձայներն՝ առաւել ևս ծանրացնում են դրութիւնը։—

Ռմբակոծութիւնը վերջանալուց յետոյ՝ կարմիր բանակի զինւորներն քաղաք են գալիս և ձեռնարկում կողոպուտի։ Նրանց միանում են մալականները։ Եւ մինչդեռ Հայերն իրանց կողոպտածներն իրանց ձեռքերով ու շալակներով էին տանում՝ մալականները իրանց մեծ մեծ ֆուրգոններն էին բեռնաւորում։

Մի երկու օրւայ Շամախւայ հարուստ թիւրք-

քութիւնը զրկւեց իր կարողութիւնից և կիսով չափ, թերևս և աւելի, աղքատացաւ։—

Զինւորութիւնը իր կարծած յաղթութիւնը տարած էր։ Բայց 5 օրից յետոյ այդ երևակայական յաղթութիւնը՝ իսկական պարտութեան փոխւեց, որի ամենալաւ ապացոյցը կարող է լինել Մաղրասայի զինւորական շտաբի հետևեալ նամակը, գրւած 1918 թ. մարտի 23-ին։

«Գերապատիւ սրբազան հայր».

«Սաղեանից Թուրքերը գալիս են Մաղրասայի վրայ։ Զարխուն և Միրիշէն գիւղերն այրւում են։ Մեզ մօտ են հաւաքւել շրջակայ հայ գիւղերի մարդիկը։ Մեր թնդանօթներից մէկն արդէն ընկել է թշնամու ձեռքը։ Յոյս չկայ Մաղրասան ազատելու»։

«Հազարաւոր մարդիկ ոչնչանալու և սրախողխող են լինելու, եթէ Աստուած ինքը օգնութեան չգայ։ Մնացել ենք կրակի մէջ և չըգիտենք ինչ անենք, ուր փախչենք։ Աղաչում ենք Ձեզ, այս դժւարին րոպէին դուրս գալ մոլլաների հետ սպիտակ դրօշակներով և կանգնեցնել Թուրք խուժանին, որ մօտենում է արդէն Մաղրասային։»

«Եթէ Ձեր կողմից մոլլաների միջոցով այս րոպէին հնարաւոր չլինի որ և է բան անել, կորածենք ամէնքս կորած է շրջակայ բոլոր հայ



գիւղերի ազգաբնակութիւնը, որ ներկայումս հաւաքւած է այստեղ»։

«Սպասում ենք օգնութեան։ Սաղիանում բոլորին սրի ու կրակի են մատնել»։—

Շատ հաւանական է, որ եթէ Բագրատ եպիսկոպոսը ցանկանար էլ, կարող չէր իրան ուղղւած խնդիրը իրագործել։ Հետևաբար այդ նամակի հետևանքն այն եղաւ որ մինչև Թուրք խուժանի Մաղրասա հասնելն՝ այնտեղ հաւաքւած զինւորներն գիւղացիների, նոյնպէս և Շամախւոյ Հայերի հետ՝ փութացին փախան Մարազա և Խիլմիլի մալականի գիւղերն։—

Նրանց հետ էր ինքը Բագրատ եպիսկոպոսը։

## ՇԱՄԱԽՒՈՅ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Գանձակից եկած խուժանը՝ Շամախւոյ ճանապարհին գտնւած հայկական գիւղերն այրելով, և պատահմամբ կամ փախչելու հնարաւորութիւն չունենալով նոյն գիւղերում մնացած Հայերին կոտորելով հասաւ Շամախի։ Եւ անմիջապէս ձեռնարկեց. իր հերթում, հայկական մասը կողոպտել, այրել, աւերել։

Այսպիսով Շամախւոյ և նրա մօտակայ հայ ազգաբնակութիւնը փչացաւ, ինչպէս առաջ փչացել էր Թուրք ազգաբնակութիւնը։

Ֆիզիքական և նիւթական զոհաբերութիւ-նից՝ ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ ազատ մնաց ռուս (մալական) ազգաբնակութիւնը՝ ի շնորհս մեծամասնական իշխանութեան տեղական կոմիսարների, որ էին ընթերցողին ծանօթ Պեօտր Արտամոնովը, եւ է Ֆրօլով:

Բացի այդ՝ մալականները հայ-թուրքական այս ընդհարումներից դեռ նիւթական օգուտ էլ ունեցան՝ իրանց ամբարների հին հացահատիկներն՝ իրանց գիւղերին ապաւինած փախստական հայ գիւղացիների վրայ՝ լաւ լաւ գներով սաղացնելով:

Ինչ և իցէ: —

Գանձակից եկած խուժանը՝ իր միսիան կատարելով յետ դարձաւ՝ մահից ազատուած 30 հայ ընտանիքը գերի վերցնելով:

Այնուհետև մերձաւոր և հեռաւոր գիւղերն փախած Շամախեցի թուրքերն՝ վերադարձան քաղաք և ձեռնարկեցին իրանց քանդւած տներն կարկատել, և հայերի տներում մնացած իրեղէններից ձռաքար անել:

Սակայն դրանց մխիթարանքն եր շատ կարճ ժամանակ տեւեց:

Բաքուի մեծամասնական իշխանութիւնը՝ 700 հոգուց բաղկացած մի ջոկատ ուղարկեց Շամախի՝ ցրւել եկած Հայերին իրանց տեղերն վերադարձնելու, աւերւած քաղաքն ու իր գաւառը վերակենդանեցնելու ծրագիր պատրաստելու և... մեծամասնականութիւնը տարածելու ու հաստատելու:



Ջոկատի հրամանատարը՝ հայ յայտնի պարտիզանն էր, Թադէոս Ամիրեանը:

Սպաներն ու զինուորներն հայեր էին, բացառութեամբ մի քանի տասնեակ ռուսների, որոնք տաճկական ճակատը լքած զինուորներից էին:—

Երբ Շամախւոյ թուրքերն «Բօլշևիկ ասքերների» գալու լուրը լսեցին՝ լեղապատառ թողին քաղաքը և ցրւեցին: Նրանց օրինակին հետևեցին և մօտակայ գիւղերի թուրքերն:

Այնպէս որ, երբ ջոկատի առաջապահ մասը քաղաքի դռներին հասաւ,—այնտեղ նրան աղուհացով մի ալեւոր, պատկառելի մօլլա դիմաւորեց՝ շրջապատուած 200-ի չափ ծերունիներով, պատանիներով ու երեխաներով:—

Մօլլան մանրամասն զեկուցում տւեց քաղաքի դրութեան մասին, հաւատացնելով, որ զօրքը, առանց որ և է կասկածի, կարող է քաղաք մտնել, որ մնացել է միմիայն ինքը՝ իրան շրջապատող հասարակութեան հետ, որոնց կեանքի անձեռնմխելիութիւնն է աղերսում:

Սպան միամտացնելով մօլլային, որ թէ

նրա և թէ նրա հովանաւորութեանը տակ եղած հասարակութեանը ոչ մի վտանգ չէ սպառնում, վերադարձաւ հրամանատարին զեկուցում տալու: Բայց մինչև նրա վերադարձը զօրքի և հրամանատարի հետ, Շամախում մնացած զինուորներից մէկը, արհամարհելով սպայի տուած խիստ պատուէրը, խփել, սպանել էր մօլլային.— Բայց նրան դատելու թոյլ չտուին ընկերները՝ սպառնալով իրանց ձեռքովը դատաստան տեսնել (самсоудъ) դատաւորների հետ:—

Հայ զօրքերի գալստեամբ՝ մալականների գիւղերն ապաւինած հայ փախստականներն վերադարձան քաղաք և գիւղերն՝ իրանց աւերակների մէջ բնաւորելու:

## ԹՈՒՐՔԵՐԻ ՆՈՐ ԿՈՏՈՐԱԾԸ

Շամախի մեկնող վաշտը՝ Բագւում թուրքերին կողոպտելու և սպանելու արհեստին ընտելացած «կարմիր բանակի» մի մասն էր: Շամախում՝ կենդրոնից հեռու՝ նա իրան աւելի ազատ զգաց,— ուստի ամէն բանից առաջ սկսեց, միմիանց ետքեից, ռմբակոծել քաղաքը և գիւղերը և կողոպտել ու սպանոտել թուրքերին, և նրանց շինութիւններից ազատ մնա-



ցածներն՝ քարուքանդ անել: (*)

Սաւսելապէս տուժեցին այն գիւղերն, որոնք մեծամասնական իշխանութիւնը ճանաչելու նկատմամբ՝ նախօրօք կազմուած համախօսականներն ստորագրելու յարմարութիւն, կամ ժամանակ չունեցան, և կամ ստորագրելու յանձնառու չեղան:—

Շամախւոյ գաւառը «մաքրագործելուց» յետոյ՝ վաշտի ռուս զինուորների մեծ մասը՝ ինքնագլուխ Բագու վերադարձաւ՝ գրպաններում ունենալով «Նիկոլայեան» թղթադրամի և ոսկեայ ու արծաթեայ դրամների մեծ մեծ ծրարներ ու կապոցներ:—

Դրանք իրանց վերադարձը, աւելի ճիշտ՝ դասալքութիւնը նրանով էին բացատրում թէ՝ Շամախում կռիւը զուտ ազգային բնաւորութիւն է ստացել, ուստի իրանք, իբրև «բօլշևիկ սօցիալիստներ» անկարող են մասնակցել: Հե-

*) Բանդուած և այրուած շինութիւնների թւումն էն 20 մզկիթ: Շամախւոյ, և նոյն իսկ ամբողջ Կովկասի մզկիթների մէջ ամենահոյակապը՝ «Ջումա մէչիդն» է:—

Նրա վրայ ձգուած ռումբերից այդ հինաւուրց շինութիւնը չմնաց,— ուստի սրբապիղծներն նրա մէջ գերաններ դարսելով կրակ ուին այնքան ժամանակ, մինչև երկաթեայ մասերը հալեցին, քարերը ճաքճքեցին և նկարներն փչացան:

տեսաքար նախապատիւ են համարում հեռանալ, գնալ իրանց հայրենիքը՝ Ռուսաստան։—

Եւ գնացին, ի հարկէ չմոռանալով հետնե-րը վերցնելու իրանց կապուտա—կողոպուտները։

Գալով վաշտին՝ նա էլ Շամախւոյ գաւառում իր միսիան վերջացնելուց յետոյ՝ անցաւ Գեօքչայի գաւառը, և միևնոյն ուղղութեամբ շարունակեց իր գործունէութիւնը։

Մինչև վաշտի յիշեալ գաւառն անցնելն՝ տեղական հայ և թուրք ազգաբնակութեան մէջ՝ ոչ մի ընդհարում տեղի չէր ունեցել։ Ըստ սովորականին՝ նրանց յարաբերութիւնը լաւ էր, թէ և վերջերումս, Շամախւոյ գաւառում տեղի ունեցած մարդախոշոշ դէպքերի առթիւ՝ նրանք ևս սկսել էին կասկածանքով նայել միմիանց վրայ։

Վաշտի ներկայութիւնը՝ փոխանակ ազգաբնակութեան փոխադարձ կասկածն ու երկիւղը փարատելու,— աւելի ևս արծարծեց մեծամասնական իշխանութիւնը նրանց ընդունել տալու խնդրի շուրջը։

Դեռ այդ բաւական չէ։

Գաւառի հայ ազգաբնակութեան մի մասը թեթևամտութեամբ և ագահութեամբ՝ հայ զինւորների ներկայութիւնից օգտւելով, և թերևս, նրանցից թելադրւելով, սկսեց ջերմ մաս-



նակցութիւն ցոյց տալ կողոպտման գործում։—

Բանն այնտեղ հասաւ, որ զինւորների մի թուրքի գիւղից դէպի միւսը արշաւելն՝ հայ գեղջուկների համար շատ ձեռնտու գործ համարւեց։

Նրանք խումբ խումբ, զինւորների ետքեւից գնում էին, որպէսզի կողոպտեն իրանց հարեւաններին։—

Անշուշտ ընթերցողներից շատերը դժւարանում են հաւատալ այս բաներին։ Սկզբում ես էլ չէի հաւատում, բայց բազմաթիւ ականատեսների վկայութիւնը պաշտօնական անձինքների հաւաստիացումը, եւ՝ վերջապէս աչքերովս տեսած եւ ձեռքերովս շօշափած իրական փաստերը իմ հաւատը ևս խախտեցին։—Ուստի, ցաւ ի սիրտ, ստիպւած եմ երևան հանելու այս վարակիչ բարոյական ախտը նրա վրայ հրաւիրելով հայ հոգևոր և գրական գործիչների լուրջ ուշադրութիւնը։—

Եթէ հայ գիւղացիութիւնն ևս այս ձևով հասկացաւ յեղափոխութիւնը, եթէ ազատութիւնը՝ նա ևս սկսեց այս այս ձևով գործադրել,— ապա վա՜յ մեզ, վա՜յ ապագայ Հայաստանին։—

Թողնենք, ընթերցող, «կարմիր բանակը»

ներկայացուցիչներին շարունակելու իրանց անարգ գործը և գտնանք Բագու։

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՍԷՅՄԻ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Մինչդեռ Բագւի մեծամասնականները ամէն միջոցի դիմում էին իրանց իշխանութիւնը ամբողջ նահանգի վրայ տարածելու՝ Կովկասեան երեք գլխաւոր ազգերի,—Վրացիների Թաթարների և Հայերի — ներկայացուցիչների մէջ խուլ կռիւ էր սկսել երկրի ապագայի վերաբերութեամբ։—

Ռուսիայի յեղափոխութեան կորիֆէյները՝ Ծերեթելլի, Գեգեչկորի և միւսները՝ ինչպէս առաջ էլ ասել ենք, Ռուսիայի ապագայի մասին յուսադուրկ եղած, և մեծամասնականների արարքներից միանգամայն զզւած՝ վերջերում իրանց գործունէութիւնը ամբողջապէս նւիրել էին իրանց հայրենիքի,— Վրաստանի անջատման ու ազատագրման Ռուսեայից։ Թաթարները՝ ոչ պակաս Վրացիներից թէ և միևնոյն նպատակին էին ձգտում, բայց միշտ հաւատարիմ մնալով իրանց քաղաքագիտական տակտին՝ իրանց ներքին ցանկութիւնը երևան չէին հանում, այլ Կովկասի երեք ազգերից մի իշխանութիւն կազմելու միտքն էին պաշտպանում։—



Գուցէ դա տակտիքա չէր, այլ անկեղծ ցանկութիւն, որ կարող էր իր արդարացուցիչ հիմունքներն ունենալ ապագայում։

Սակայն երբ Վրացիք Բաթումի իրանց դելեգատների հետ գաղտնի բանակցութիւն մըտնելուց յետոյ՝ վճռեցին Վրաստանը անկախ հրատարակել,— նոյնը արին և Թաթարները իրանց հայրենիքի,— Ադրբէջանի վերաբերութեամբ։

Սէյմում հայութիւնը ներկայացնող Հ. Յ. Դաշնակցութեանը՝ ուրիշ բան չէր մնում, քան համակերպում իր հարևաններին։—

Այսպիսով Անդրկովկասեան սէյմը ինքն իրան արձակեց, և նրա երեք ազգերի ներկայացուցիչները՝ առանձին առանձին բանակցութեան մէջ մտան Օսմանեան կառավարութեան Բաթումի ներկայացուցիչների հետ։

Այս բանակցութեան հետևանքը մեզ, հայերիս համար հայ-տաճկական հաշտութիւնն եղաւ, որի զօրութեամբ առաջին անգամ «Հայաստան» բառը պաշտօնապէս ճանաչւեց քաղաքագիտական շրջաններում մեզ մօտ, և արտասահմանում։

# ՀԱՅ-ՏԱՃԿԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ

*Այս պատմական դօկումենտը հետեւեալ վերնագիրն է կրում «Դաշն Խաղաղութեան եւ բարեկամութեան Օսմանական կայսերական կառավարութեան և Հայաստանի հանրապետութեան միջև»։*

*Դաշնագիրը գրւած է Բաթումում 1918 թ. Յունիսի 4-ին և բաղկացած է 13 յօդւածներից։ —*

*Ահա նա.*

*Օսմանեան կայսերական կառավարութիւնը մի կողմից և իրեն անկախ յայտարարած Հայաստանի հանրապետութեան կառավարութիւնը միւս կողմից, համաձայնելով փոխադարձաբար սահմանել բարեկամական և բարի հարեւանութեան յարաբերութիւններ իրենց երկրների միջև քաղաքական, իրաւաբանական, անտեսական և մտաւորական խնդիրների շուրջը, նշանակեցին իբրև իրենց լիազօրներ հետեւեալ անձանց։*

*Օսմանեան կայսրութիւն.*

*Նորին գերազանցութիւն Խալիլ բէյ պատգամաւոր, արդարադատութեան մինիստր եւ նախագահ պետական խորհրդի, առաջին պատւիրակ եւ Նորին գերազանցութիւն գեն.-լէյտենանտ Վեհիբ Մեհմեդ փաշա, գլխաւոր հրամա-*



*նատար Օսմանեան զօրքերի Կովկասեան զօրքերի Կովկասեան ֆրոնտում, զինւորական պատւիրակ։*

*Հայաստանի հանրապետութիւն.*

*Պր. Ալեքսանդր Խատիսեան, պատւիրակութեան նախագահ, պ. Ռուբէն Քաջազնունի պատւիրակ, եւ պ. Միքայէլ Պապաջանեան, պատւիրակ, որոնք անձինք, ծանօթանալով երկու կողմերի պատւիրակութիւնների հետ եւ գտնելով նրանց կանոնաւոր եւ պատշաճ ձեւով. համաձայնեցին հետեւեալ որոշումների վերաբերմամբ։*

Յօդ. I

*Օսմանեան կայսերական կառավարութեան և հայկական հանրապետութեան կառավարութեան մէջ հաստատւում է կայուն խաղաղութիւն և յարատեւ բարեկամութիւն.*

Յօդ. II

*Սահմանագիծը որ ունի հետեւեալ ուղղութիւնը, բաժանում է Օսմանեան կայսրութիւնը Վրաստանի հանրապետութիւնից, Հայաստանի հանրապետութիւնից եւ Ադրբէջանի հանրապետութիւնից։*

*...Դեւեգիրեան* *) *լեռների գագաթներով*

---

*) *Սահմանագծի առաջին մասը բերւած է Վրաստանի հետ կնքւած հաշտութեան տեքստի մէջ (տ. «Հորիզոն» № 110).*

անցնելով; սահմանագիծը փոխում է իր ուղղութիւնը դէպի հարաւ, անցնելով Ագրիքար, Բաշքերան, Նուառահման լեռներից յետոյ նա շարունակում է հարաւային ուղղութեամբ եւ անցնելով գագաթների գծով, հանդիպում է Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղիին Աղբուլաղ աւանից 5 կիլ. դէպի արեւմուտք. այստեղից նա գալիս է գագաթների գծով. մինչեւ Խանւալի աւանը, որտեղից գրեթէ ուղիղ գծով հասնում է մինչեւ Ալագեօզի ամենաբարձր գագաթը եւ հետեւելով դարձեալ ուղիղ գծով կտրում է Էջմիածին—Սարդարապատ խճուղին մի կէտում, որը գտնւում է Էջմիածնից 7 կիլոմետր դէպի արեւմուտք։ Յետոյ նա պտոյտ է անում այդ քաղաքի շուրջը 7 կիլոմետր տարածութեան վրայ, շարունակում է զուգահեռական ուղղութեամբ Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղու գծին մօտ 6 կիլոմետր տարածութեան վրայ այդ երկաթուղուց և 16 կիլոմետր դէպի հարաւ-արեւմուտք Բաշքեարան աւանից նա կըտրում է ճանապարհը, որը գնում է այդ աւանից դէպի երկաթուղու գիծը, յետոյ նա շրջում է դէպի հարաւ-արեւելք, անցնում է Աշաղի Կարաբաղլար գիւղից մէ կիլոմետր դէպի արեւմուտք Շաղարլու, Ղարախաչ, Աշաղի Ջանախչի աւաններով և հասնում է մինչև Էլֆինչայ ո-



րով նա շարունակում է մինչեւ Արփա աւանը։ Այս վերջին աւանից նա խառնւում է Արփաչայ հովտի հետ, հասնում է մինչեւ Կայանալու աւանը հետեւելով Կայլդ գետի ընթացքով՝ հասնում է մինչև Աղտաբան լեռան գագաթը, յետոյ նա անցնում է Ղարատարնա, Արաջին, Ղարանլիկ լեռների գագաթներով, հասնում է մինչեւ Ռիլիանչայի իջնելը, հետեւում է նրա հովիտով մինչեւ որ հասնում է Ազա աւանից դէպի հարաւ՝ Ալիջին աւանը, որը գտնւում է ռուս-պարսկական նախկին սահմանագծի վրայ։

Սահմանագծի վերջնական որոշումը կը լինի տեղն ու տեղը երկու կողմերի անդամներից կազմուած մասնաժողովի ձեռքով։

### Յօդ. III

Հայաստանի հանրապետութեան եւ Ադրբէջանի հանրապետութեան կառավարութիւնների միջեւ կազմուած արձանագրութիւնը նրանց փոխադարձ սահմանները որոշելու մասին կը հաղորդւի Օսմանեան կայսերական կառավարութեան։

### Յօդ. IV.

Օսմ. կայսերական կառավարութիւնը պարտաւորւում է զէնքի ոյժով օգնութիւն հասցնել Հայաստանի հանրապետութեան կառավարու-

թեան այն դէպքում, երբ վերջինս նրան կըխնդրի այդ մասին՝ կարգը եւ հանգստութիւնը երկրում ապահովելու համար։

Յօդ. V

Հայաստանի հանրապետութեան կառավարութիւնը պարտաւորւում է եռանդով զինաթափել հրոսակախմբերի կազմակերպման և ապաստագինման իր տերրիտորիայի սահմաններում ինչպէս եւ զինաթափ անել ցրել բոլոր այն հրոսակախմբեր , որոնք կը գան այնտեղ թաքնուելու։

Յօդ. VI

Հայկական հանրապետութեան մէջ ապրող մահմեդականների կրօնը և ազատութիւնները կը յարգուեն։

Նորին կայսերական մեծութիւն Սուլթանի անունը կը յիշատակուի մահմեդականների հասարակական աղօթքների մէջ։

Նրանք կը վայելեն նոյն քաղաքացիական և քաղաքական իրաւունքները, ինչպէս և միւս կրօններին պատկանող քաղաքացիները։ Նրանք կարող են ուսանել իրենց մայրենի լեզուով, ինչպէս իրանց կրօնի լեզուով։

Կրօնի արարողութիւնը և բարեգործութիւնը ապահովելու համար կարող են կազմակերպուել մահմեդական համայնքներ, որոնք իրաւաբանական անձինք լիազօրութիւններ



կունենան հիմնել մզկիթներ, հիւանդանոցներ, դպրոցներ, կրօնական և բարեգործական հաստատութիւններ, յատկացնել նրանց պահպանութեան համար համապատասխան շարժական և անշարժ կայքեր, որոնք կը կառավարուեն յատուկ կառավարիչների ձեռքով։

Մի գլխաւոր մուֆտի կը նստի հայկական հանրապետութեան գլխաւոր քաղաքում, Երեւանում, և ուրիշ մուֆտիներ կը նստեն հանրապետութեան միւս վայրերում, որտեղ նրանց ներկայութիւնը անհրաժեշտ կը նկատուի։

Այդ մուֆտիների յարաբերութիւնները Շէյխ-ուլ իսլամութեան հետ, ինչպէս նա և նրանց իրաւունքները և պարտաւորութիւնները որոշուած են №... համաձայնութեան մէջ, որը կցւում է սոյն դաշնագրին։

Յօդ. VII

Ի նկատի ունենալով, որ Օսմանեան կայսրութեան և Հայկական հանրապետութեան միջև բացակայում են որևէ պայմանագրեր, կոնվենցիաներ, համաձայնութիւններ, ակտեր կամ այլ միջազգային վաւերագրեր, երկու պայմանագրւող կողմերը համաձայնում են կնքել հիւպատոսական պայմանագիր, առևտրական դաշնագիր և այլ վաւերագրեր, որ անհրաժեշտ կը գտնեն իրենց իրաւական և անտեսական յարա-

բերութիւնները կարգաւորելու համար։

Հիւպատոսական պայմանագիրը կը կնքուի երկու տարուայ ընթացքում սկսած ներկայ դաշնագրի ռատիֆիկացիայի փոխանակութիւնից։ Այս անցողական շրջանի ժամանակամիջոցում ընդհանուր և փոխ. հիւատոսները փոխադարձաբար կօգտուեն իրենց արտօնութիւնների և պաշտօնների նկատմամբ ամենից շատ հովանաւորուած ազգի դրութեամբ ընդհանուր միջազգային իրաւունքի հիմունքներով և փոխադարձաբար։

Առևտրական դաշնագիր միջազգային իրաւունքի հիմունքներով կնքելու համար բանակցութիւններ կը սկսուեն անմիջապէս Թիւրքիայի և նրա դէմ պատերազմող պետութիւնների միջև ընդհանուր հաշտութիւն կնքելուց յետոյ։ Մինչև այդ ժամանակ եւ յամենայն դէպս մինչև 31 դեկտեմբերի 1919 թւի երկու կողմերից էլ կը գործադրուեն այն ժամանակաւոր կանոնները, որոնք հաստատուած են ներկայ դաշնագրիր կցուած I յաւելուածով։ Այդ կանոններից կարելի է հրաժարուել սկսած 1919 թւի յունիսի 30 ից և դրա հետևանքները կիրագործուեն վեց ամիս յետոյ։

Ցամաքային յարաբերութիւնները կը սկսուեն ներկայ պայմանագրի վաւերացման փոխանակութիւնից յետոյ։



Յօդ. VIII

Պայմանադրուող կողմերը պարտաւոր են տալ փոխադարձաբար բոլոր հնարաւոր դիւրութիւնները երկաթուղային փոխադրութիւններին վերաբերմամբ, սահմանելով և գործադրելով պակասեցրած տարիֆներ։ Մասնաւորապէս ինչ վերաբերում է երկաթուղուգծեր կառուցանելու շահագործելու և պահպանելու կամ ուրիշ հասարակական աշխատանքների համար անհրաժեշտ նիւթերի փոխադրութեանը, կը գործադրուեն յատուկ նուազագոյն տարիֆներ։

Համաձայնուող կողմերի երկաթուղիներ շարժական կազմի փոխանակութիւնը կը կատարուի համաձայն միջազգային սկզբունքների, որ հաստատուած են այդ մասին։

Պայմանադրուող կողմերը անմիջապէս բանակցութիւններ կը սկսեն վերոյիշեալ կէտերի մանրամասնութիւնները որոշելու համար։

Յօդ. IX

Մինչև Հայաստանի հանրապետութեան միջազգային պոստ-հեռագրական միութեան մէջ մտնելը, պոստային և հեռագրական յարաբերութիւնները Օսմանեան կայսրութեան միջև կը վերսկսուեն ներկայ դաշնագրի վերացման փոխանակութիւնից յետոյ, համաձայն այն կարգերի որ սահմանուած են միջազգային Միութեան

պոստային և հեռագրական պայմանագրերով, համաձայնութիւններով և կանոններով։

Յօդ. X

Պայմանագրող կողմերից մէկի տերիտորիայի բնակիչները և համայնքները, որոնք ունեն սեփականութեան և շահագործութեան իրաւունք, սահմանի միւս կողմում գտնուող անշարժ կայքերի վերաբերմամբ կարող են օգտուել նրանցից, շահագործել նրանց կամ կապալով տալ, կառավարել կամ վաճառել անձամբ կամ հաւատարմատարների ձեռքով։

Ոչ ոք չի կարող զրկել իրեն պատկանող սեփականութեան իրաւունքներից այդ անշարժ կայքերի վերաբերմամբ, բացի այն դէպքերի, երբ այդ գոյքերը կը գրաւեն հասարակական օգտի համար և անպայման որոշեալ վարձատրութեամբ։

Ոչ մի արգելք չպիտի դրուի այդ համայնքների ներկայացուցիչներին և բնակիչների սահմանն անցնելու համար, երբ նրանք ներկայացնեն ճանապարհորդական թղթեր, որոնք կը տրուեն իրենց բնական վայրի պատշաճաւոր իշխանութիւններից և կը վաւերացնեն միւս կողմի իշխանութիւններից։

Դիւրութիւններ և առանձին արտօնութիւններ կը տրուեն սահմանակից վայրերում։



Վերոյիշեալ կէտերի մասին մանրամասնութիւնները որոշուած են այս դաշնագրին կցած II յաւելուածում։

Յօդ XI

Հայկական հանրապետութեան կառավարութիւնը պարտաւորւում է գործ դնել իր բոլոր ջանքերը, որպէսզի սոյն պայմանները ստորագրելուց անմիջապէս յետոյ հեռացնի Բագու քաղաքից այնտեղ գտնուող հայկական ուժերը և ապահովել, որ այդ հեռացումը ոչ մի ընդհարման տեղիք չտայ։

Յօդ. XII

Օսմանեան կայսրութեան և նրա դաշնակիցների ու Ռուսաստանի միջև Բրեստ-Լիտովսկում կնքուած ընդհանուր և լրացուցիչ հաշտաբար պայմանագրի որոշումները, որոնք չեն հակասում ներկայ դաշնագրին, պահում են իրենց ոյժը պայմանագրող կողմերի համար։

Յօդ. XIII

Այն տերրիտորիաներից, որոնք գրաւված են համապատասխան զօրքերով ներկայ պայմանագրով որոշուած սահմաններից դուրս պէտք է հեռանան այդ զօրքերը այս պայմանագիրը ստորագրելուց յետոյ։

Յօդ. XIV

Ներկայ դաշնագիրը կը վաւերացուի և վաւերացումները կը փոխանակուեն Կ. Պօլսում մի ամսուայ ընթացքում կամ աւելի վաղ, եթէ կարելի կը լինի։ Նա կը մտնի իր ուժի մէջ այդ փոխանակութեան օրից։

Ի հաստատումն սրա, լիազօրները ստորագրեցին խաղաղութեան և բարեկամութեան ներկայ դաշնագիրը և դրին իրենց կնիքները։ Պատրաստուած է երկու օրինակ։

Ստորագրած են՝ Խալիլ, Վեհիբ,
Ալ. Խատիսեան,
Յ. Ռ. Քաջազնունի
Եւ. Մ. Պապաջանեան։

## ՆՈՐ ԱՐԾԱԿԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ.

Այս դաշնագիրը եկաւ մի այլ, և արդէն երրորդ անգամ, լաւ առիթ ընծայելու հայ ազգին՝ տաճիկների հետ հաշտուելու։—

Սակայն այսպէս չմտածեցին Բագուի հայ քաղաքական գործիչներն։ Նրանք առանց զգալու Թիֆլիսի Ազգային Խորհրդի որոշմանը ենթարկուելու իրանց տարրական պարտականութիւնը՝ միանգամայն այդ որոշմանը հակառակ դիրք բռնեցին։ Եւ բացէ իբաց արհամարհելով դաշնագրի XI յօդուածը,— անիշխանաբար ձեռ-



նարկեցին իրանց սովորական արկածախնդրական քայլերին։

Իրանց յանդգնութիւնը նրանք մինչև այն կէտին հասցրին, որ սկսեցին Թիֆլիսի իրանց պատրոններին ոճրագործ անուանել։

Ահա տեսէք թէ Դաշնակցութեան Բագուի օրգանը՝ ինչ լեզուով ընդունեց «ազգային Խորհրդի» պայմանագիրը։

... «Ստեղծւում է «անկախ Հայաստան»։ Ազգային Խորհրդի պատգամաւորութիւնը Տաճկաստանի հետ խաղաղութեան պայմանագիր է ստորագրել և իրան ժամանակաւորապէս հայկական գաւառների «բարձրագոյն» և «միակ» իշխանութիւն յայտարարել։

Կատարուել է այսպիսով մի ոճիր։—

Կատարուել է մի ակտ, որ ծաղր է հարիւր հազարներով զոհերի թափած արեան։»

Յայտարարուած անկախ Հայաստանը» հակառակ մեր ժողովրդի կամքի, երկաթէ շղթաներով կաշկանդում է մեզ, նոր պարան ձգում այդ տանջուած ժողովրդի վիզը և վերջնականապէս նրան հեռացնում է յեղափոխական Ռուսաստանից, ռուս ըմբոստ աշխատաւորներից։

«Մենք ամենաբուռն կերպով բողոքում ենք հայ ժողովրդի կամքը ոտնահարողների

դէմ, մենք չենք ցանկանում պոկել Ռուսաստանի աշխատաւորութիւնից։(*)

Թիֆլիսի Հայ Ազգային Խորհրդի պատգամաւորութեան Տաճկաստանի հետ ստորագրած խաղաղութեան պայմանագիրը դաշնադրական մի նոր ակտ է,— որով կսկիծով յայտարարում ենք մենք, որ նպատակն է Անդրկովկասի բոլոր (??) աշխատաւորութեան հայերի հետ միացեալ ուժերը ջլատել, և մեր կայան երկիրն այնուհետև սրի ու հրի ճարակ դարձնել։» Ուստի .... բացականչում է «Արևը»,— «դէպի կռիւ, Անդրկովկասի բոլոր ազգերի աշխատաւորներ, վերջնական յաղթանակը մերն է»։

## ՅԱՂԹԱԿԱՆ ԱՐՇԱՒ

Եւ կռիւն սկսեց, որը շնորհաւորելով Դաշնակցութիւնը հետևեալ առաջնորդողը գրեց, որ «յաղթական արշաւ» վերնագիրն է կրում։

*) Մի ժամանակ Դաշնակցութիւնը պինդ կպել էր Ռուս միապետութեան պոչին և նրանից էր ակնկալում Հայ ազգի փրկութիւնը։ Այսօր Դաշնակցութիւնը ինքնիրան սօցիալիստ ձևացնելով պինդ կպել է Ռուս բոլշևիկների պոչին և նրանից է սպասում Հայերի փրկութիւնը յանուն Ռուսաստանի աշխատաւորութեան։ Վաղը անշուշտ նա բոլշևիկների պոչը կթողնէ և միւսների պոչը կբռնէ, և այսպէս անվերջ մինչև Հայ ժողովուրդը ամենուրեք ջարդ ու փշուր կը լինի, կը քայքայուի։



—«Անդրկովկասը հրդեհուած է։

Պատերազմ է յայտարարուած յեղափոխական դեմոկրատիային և նրա Խորհրդային Իշխանութեանը՝ Նազիմ փաշաների, Խան-Խոյսկիների և Ջխենկելիների երրեակ համաձայնութեան կողմից։

Բաշարի կարմիր բանակն արդէն դուրս եկաւ Անդրկովկասի յեղափոխութեան կենտրոնից—Բագւից,— փշրելու թշնամու առաջխաղացումը։ Ապստամբութեան դրօշակն են բարձրացրել նաև վրացի, հայ, ռուս և թուրք (??) աշխատաւորներն Անդրկովկասի զանազան վայրերում ընդդէմ Թիֆլիսում ծածանւող գերմանական և տաճկական անարգ դրօշակների—Նուրի բէյների քաղցած, վախկոտ ու փախուստի ճամբան բռնած խուժանի դէմ։

Հայ ըմբոստ աշխատաւոր գիւղացին, որի գլխին ոչնչացման վտանգը դամոկլեան սրի նման կախուած է, Ախալքալակի, Ալէքսանդրոպոլի, Երևանի և Ալագեազի շրջաններում, ինչպէս հեռագիրներն են հաղորդում, փոթորկւել է և ջարդ ու փշուր արել (!?) տաճկական թուլամորթ և լքւած բանակը. ընդհարւում են երկու հակադիր ուժեր, մէկ կողմից գերմանական իմպերիալիզմը միացած տաճկական ֆէօտալիզմի հետ, միւս կողմից ազատութիւնը և աշխատաւորութեան արդար դատը։

*Հակայեղափոխութեան և սարկութեան կռիւն է ուղղուած յեղափոխութեան ու ազատագրութեան դէմ։*

*Այս երկու փոթորկալից ու յուզումնալից ուժերի բախման մէջ, մենք համոզուած ենք, որ պատուով դուրս կգայ յաղթական յեղափոխութիւնը, որի կրողն է Անդրկովկասի աշխատաւորութիւնը։*

*Այդ աշխատաւորութեան յաղթական երթն ենք ողջունում, որ այսօր կամ վաղը դէն պիտի շպրտի դաւադիրների և դաւաճանների սև դրօշակը, և նրա փոխարէն բարձրացնի յեղափոխութեան կարմիր դրօշակը։ Անդրկովկասի սըրտում։*

*Այո, կարմիր բանակի յաղթական արշաւն ենք ողջունում, Անդրկովկասի բովանդակ աշխատաւոր գիւղացիութեան ազատագրութիւնն ենք ծափահարում»։(*)*

*Ափսոս որ,*

*Բաքւի բոլշեվիքական իշխանութեան* alter ego *Հ. Յ. Դաշնակցութեան այս խղճերն ու յոյսերն յօդս ցնդեցին և կարմիր բանակը՝ կարճ ժամանակում խայտառակ կերպով փախուստի ճամբան բռնելով պատճառ դարձաւ Գեօքչայի և Շամախիի գաւառների հայերի փախստեան ու կոտորածան, և նրանց տների ու կայքերի աւերմանն ու հրդեհմանը։—*

(*) «Արև» 1918 № 109



*Դաշնակցութեան Բաքւի կենդրոնական կոմիտէն՝ կարմիր բանակի նահանջի պատճառն բացատրելով՝ աւելացրեց թէ՝ «հերոս բանակը եկել է որ հանգստանայ, որպէսզի նորից պատերազմի դաշտը ելնի իր յաղթական արշաւն սկսելու»։*

*«Սակայն թշնամին քնած չէ. նա օգտուելով իր համար ստեղծուած այս նպաստաւոր պայմաններից համեմատաբար աւելի թոյլ ուժերով յանդգնութիւն ունեցաւ առաջ շարժուել և այժմ եկել կանգնել է մեր քաղաքի դռների առաջ։ Բանդաները երազում են օր առաջ մըտնել Կովկասի մեր միակ ազատ տները ու հիմնարկութիւնները, որի անցկացնելու անմեղ երեխաներին ու ծերերին, անպատուելու մեր քոյրերին ու մայրերին, իսկ երիտասարդութեան առնական ուժերին սպանդանոցներում կենդանի կենդանի կաշիները քերթելու։*

*Առանձնապէս դու, հայ ժողովուրդ,— շեշտում է կենտրոնական կոմիտէն,— դարեր շարունակ կաշւիդ վրայ կրել ես այս բարբարոսութիւնները և այս վայրկեանին պատմական վտանգը նորէն կանգնել է շէմքիդ առաջ։ Սթափուիր ու շարժուիր յաղթելու կամ պատուով մեռնելու։*

«Բազւի հայ ժողովուրդ, դու նոյն իսկ միայնակ քո ուսերի (??) վրայ կարող ես այս կռւի ծանրութիւնը վերցնելու պատւով դուրս գալ անհաւասար կռւից։

Մենք կոչ ենք անում հայութեան բոլոր խաւերին (այստեղ ոչ միայն աշխատաւորներին այլ նա և միւս խաւերին), առանց հասակի խտրութեան՝ զէնքի տակ մտնել օրհասական այս կռւից պատւով ելնելու կամ հակահեղափոխութեան դէմ վարած մեր այս պայքարը գէթ այնքան ձգձգելու, մինչև որ դրսից մեզ օգնութիւն հասնի։

Մեզ նայում է Կովկասեան բոլոր յեղափոխական արիւնաքամ եղած հայ աշխատաւորութիւնը։

Մեր յաղթական բանակով պիտի համայն Կովկասին ազատութիւն բերենք, կապելով նրան նորին մեծութիւն յեղափոխական Ռուսաստանի հետ։

Մեր արշաւը տարածելու է ամբողջ Կովկասում բանւոր ու գիւղացիական իշխանութիւն, մեր յաղթանակից է կախւած հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը։

Ի զէն քաղաքացիներ, թանգ է իւրաքանչիւր վայրկեանը։

Ստւարացնենք կարմիր բանակի շարքերը,



ազատութիւնը ձեռքից չտալու, յեղափոխութիւնը փրկելու։(*)

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ։

Մի քանի խօսք «կարմիր բանակի» մասին։ Դա մի կատարեալ կօնգլօմերատ, մի խառնուրդ էր ամէն ազգի, լեզւի և տարիքի միանգամայն անծանօթ և անփորձ զինւորականութեան տարրական կանոններին։—

Ճշմարիտ է որ զինւորները նախապէս 10-15 օրւայ միջոցում վարժւում և փորձւում էին քաղաքի հրապարակներում և եկեղեցիների բակերում։ Սակայն դա աւելի ձևականութիւն էր քան գործ, մանաւանդ որ զինւորներին վարժեցնող սպաների ամենամեծ տոկոսը քաղաքային և ծխական դպրոցների սաներն էին մեծ մասամբ իրանց գիտութեամբն ու փորձառութեամբ, իբրև սկսակներ, շատ չէին տարբերւում հասարակ զինւորներից, և վառօտի հոտը դեռ ոչ միանգամ առած չէին։

Բացի այդ՝ կարմիր բանակը ընդհանրապէս բօլշևիքական հայեացք և ընթացք ունեցող էր ցոյց տալիս իրան և товарищъ,— ընկեր բառը շատ նեղ և միակողմանի կերպով էր ընբռնում ու գործադրում։

(*) «Արև» 1918 թ. № 150

Ուստի զարմանալի ոչինչ չկայ, եթէ որ օրական 72,000 ռաձիոն կերակուր ստացող զինուորներից հազիւ 15,000 գործում էին թիկունքում և ռազմաբեմում, իսկ միւսներն կողմնակի ծառայութիւններ էին անում, առևտրականութեամբ պարապում, գիշերային օրգիաներ սարքում, և, ինչպէս ասում են, փողը ջրի նման ծախսում։ Եւ դա շատ հասկանալի է. հասարակ զինուորը բացի կօշիկից, շորից, կերակրից, շաքարից, չայից՝ ստանում էր ամսական 300 րուբլի և իր ընտանիքի իւրաքանչիւր անդամի համար էլ 75-ական րուբլի։ իսկ ընտանիքների անդամների թւերի քանակութիւնը կախւած էր տանու կօմիտէտներից։

Վարձատրութեան այս պայմանները կարմիր բանակն էին հրաւիրել կամաւորների ահագին քանակութիւն, դեռ մի կողմ թողած պարտադիր զինուորակոչերն։

Ահա այս էր, ընթերցող, բօլշևիքական իշխանութեան կարմիր բանակը, որ Գարկանովների և Համազասպների առաջնորդութեամբ մէկնեց ամբողջ Կովկասը նուաճելու, բայց կիսաճանապարհին ամենախայտառակ կերպով նահանջեց, ուղղակի խուճապի ճամբան բռնեց Գարամարդեան գիւղից մինչև Բագու։

Դրա պատճառը երկու էր. նախ կարմիր



բանակի իրան կազմը, իր ներքին պակասութիւնները և երկրորդ՝ այն արտաքին դժնդակ պայմաններն, որոցմով ոչ մի բանակ կարող չէ գործ կատարել, այլ ուզի չուզի պիտի զոհւի և իսպառ չջնջւելու համար՝ պիտի փախչի։

Բանը նրանումն է, որ կարմիր բանակի ընթացած ամբողջ ճանապարհը և ռազմադաշտերը ամառնային կեղիչ ճառագայթից այրւած, խանձւած էին. ստւեր, թուփ ոչ մի տեղում. ջուր ասած բանը՝ Աստւած տայ. տեղ տեղ պատահած չորացած առուների կեղտոտ ջրերն էլ լի ամեն տեսակ բացիլներով. մոծակներ՝ անթիւ ու անհամար։

Հացի, կերակրի մատակարարումը՝ չափազանց անկանոն և անբաւարար։ Բժշկական ոչ մի օգնութիւն, վէրքեր կապելու կայարաններ կամ իսպառ չկայ, կամ չեղածի հաշւումն է։

Աւելացրէք դրա վրայ Քիւրդամիր գիւղում Ալէքսանդր Ագրիեանի ընդարձակ պահեստից յափշտակւած հարիւրաւոր տակառներով գինու և հազարաւոր շիշերով կօնեակի ծայրայեղ գործածութեան հետևանքով՝ արծարծւած զինւորական կարգապահութեան բացակայութիւնը և ձեզ համար պարզ կը լինի թէ կարմիր բանակի «յաղթական արշաւը» ինչով պիտի վերջանար։

Ուստի զարմանալի ոչինչ չկայ, եթէ որ օրական 72,000 ռաձիոն կերակուր ստացող զինւորներից հազիւ 15,000 գործում էին թիկունքում և ռազմաբեմում, իսկ միւսներն կողմնակի ծառայութիւններ էին անում, առևտրականութեամբ պարապում, գիշերային օրգիաներ սարքում, և, ինչպէս ասում են, փողը ջրի նման ծախսում։ Եւ դա շատ հասկանալի է. հասարակ զինւորը բացի կօշիկից, շորից, կերակրից, շաքարից, չայից՝ ստանում էր ամսական 300 ռուբլի և իր ընտանիքի իւրաքանչիւր անդամի համար էլ 75-ական ռուբլի։ իսկ ընտանիքների անդամների թւերի քանակութիւնը կախւած էր տանու կօմիտէտներից։

Վարձատրութեան այս պայմանները կարմիր բանակն էին հրաւիրել կամաւորների ահագին քանակութիւն, դեռ մի կողմ թողած պարտադիր զինւորակոչերն։

Ահա այս էր, ընթերցող, բօլշևիքական իշխանութեան կարմիր բանակը, որ Գարկանովների և Համազասպների առաջնորդութեամբ մէկնեց ամբողջ Կովկասը նւաճելու, բայց կիսաճանապարհին ամենախայտառակ կերպով նահանջեց, ուղղակի խուճապի ճամբան բռնեց Գարամարգեան գիւղից մինչև Բագու։

Դրա պատճառը երկու էր. նախ կարմիր



բանակի իրան կազմը, իր ներքին պակասութիւնները և երկրորդ՝ այն արտաքին դժնդակ պայմաններն, որոցմով ոչ մի բանակ կարող չէ գործ կատարել, այլ ուղի չուզի պիտի զոհւի և իսպառ չջնջւելու համար՝ պիտի փախչի։

Բանը նրանումն է, որ կարմիր բանակի ընթացած ամբողջ ճանապարհը և ռազմադաշտերը ամառնային կեղիչ ճառագայթից այրւած, խանձւած էին. ստւեր, թուփ ոչ մի տեղում. ջուր ասած բանը՝ Աստւած տայ. տեղ տեղ պատահած չորացած առուների կեղտոտ ջրերն էլ լի ամեն տեսակ բացիլներով. մոծակներ՝ անթիւ ու անհամար։

Հացի, կերակրի մատակարարումը՝ չափազանց անկանոն և անբաւարար։ Բժշկական ոչ մի օգնութիւն, վերքեր կապելու կայարաններ կամ իսպառ չկայ, կամ չեղածի հաշւումն է։

Աւելացրէք դրա վրայ Քիւրդամիր գիւղում Ալէքսանդր Սգրիեանի ընդարձակ պահեստից յափշտակւած հարիւրաւոր տակառներով գինու և հազարաւոր շիշերով կօնեագի ծայրայեղ գործածութեան հետևանքով՝ արծարծւած զինւորական կարգապահութեան բացակայութիւնը և ձեզ համար պարզ կը լինի թէ կարմիր բանակի «յաղթական արշաւը» ինչով պիտի վերջանար։

## ՔՈ ԲԵՐԱՆՈՎ ՔԵԶ ԴԱՏԵՑԻՐ

Գարամարգեանի բարձունքներից ամենախայտառակ կերպով փախուստ տուողը, և Գեօքչայի ամբողջը գաւառի հայ ազգաբնակութեան լեղաճաք անողը՝ «3-րդ յեղափոխական բրիգադայի հրամանատար» Համազասպն էր, որ փոխանակ իր արարքի համար կարմրելու, փոխանակ ամաչելու, դեռ անամօթութիւն ունեցաւ իր կիսով չափ ջարդւած բրիգադայի մնացորդ մասին հետևեալ բառերով մխիթարել։

«Գարամարգանի բարձունքներում վարած մեր կռւով, փայլուն էջ բացինք Խորհրդային Իշխանութեան յեղափոխական պատմութեան մէջ։ Մի աւելորդ անգամ ապացուցելով, որ յեղափոխականօրէն դաստիարակւած (!!!) կարմիր բանակի զինւորների համար չկան ոչ մի տեսակի սահմաններ»։ (*)

Գալով Համազասպի նման յեղափոխականին և նրա գոված կարմիր բանակի ինչ լինելուն՝ եթէ ցարդ գրւածներն բաւական չեն, ապա աւելորդ չենք համարում Դաշնակցութեան օրգանի սեպհական վկայաբանութիւնը նրանց մասին։

—«Էլ դիւքանչի չմնաց. էլ կառավարիչ չմնաց ու կաշառակեր սատրապներ չմնացին,

(*) «Արև» 1918 № 119



բոլորը իրանց յեղափոխական յայտարարեցին և մտան յեղափոխական կուսակցութիւնների մէջ, այն էլ այստեղ մեր աչքի առաջ։ Գիւղերի մասին շատ է գրւել, տէրը փրկէ թէ ինչ է կատարւում այնտեղ։ Ժամանակի ազդեցութեան տակ կեղեքիչները մտնելով յեղափոխական բանւորական կուսակցութիւնների մէջ երկու գլխաւոր նպատակ ունեն. առաջին՝ պաշտպանւել, հովանաւորւել հէնց նրանցից, ումից նրանց հարստութեանը վտանգ է սպառնում երկրորդը՝ յեղափոխութեան փոսս տալ ներսից»։

«Առաջին դէպքում յեղափոխութիւնը որպէս զրահ պաշտպանում է նրանց, օրինակ, վաճառական Մարկոսը գործերը վերջացրել է, այժմ բանւոր է— բոլշևիկ կամ էսէր է, ով կարող է նրան ասել՝ աչքիդ վերև յօնք կայ։ Մարտիրոսը փոտրադչիկութիւնից ձեռք է վերցրել, օրով է բանում— դաշնակցական է կամ մենշևիկ դեմոկրատ ու հնչակ, ո՞վ կարող է նրա հաւին քշօ ասել։ Դրան աւելացրու և այն հանգամանքը, որ յեղափոխական կուսակցութիւնների մէջ մրցութիւն կայ, ամէն մէկը իր հերթին աշխատում է իրանց հետևողների թիւը աւելացնել, նամանաւանդ ընտրութիւնների ժամանակ։

«Մեզ ինչ է մնում անել,— հարցնում է դաշնակցութեան օրգանը,— և ինքն իրան պատաս-

տանում:» Ահա թէ ինչ: Մեր շարքերից վտարենք այսպիսիներին, որոնցից բացի վնասից ոչ մի օգուտ չունենք: Մեր կռիւը դասակարգային է: Աշխատաւոր դասակարգը առանձին պիտի կազմակերպուի, իսկ շահագործողները առանձին: Կեղեքիչները մեր մէջ տեղ չունեն, նրանք նենգ յեղափոխականներ են դարձած, թող կորչին նրանք մեր շարքերից»:

Ընկերներ, վռնտէք նրանց ձեր շարքերից: Դրանցով խառն մեր շարքերով մենք յեղափոխական գործ կատարել չենք կարող: Դրանց հետ խառն մեր շարքերով ազատութիւնը պահել չենք կարող:»(*)

Այս յօդուածի տակ ստորագրած է» բանւոր վարդապետ», որ անշուշտ մէկն է այդ «նենգ» յեղափոխականներից, որոց այնքան ճշգրիտօրէն նկարագրել է:— Այդպիսի նենգ յեղափոխականներ անշուշտ ամէն մի կուսակցութիւնում եղել կան ու կը լինին. այդ կողմից Դաշնակցութիւնը, ինարկէ. բացառութիւն չէ կարող կազմել: Ընդհակառակը՝ այդ նրա առաւելութիւններից մէկը պէտք է համարել:

Եւ երբ այս այդպէս է, շատ պարզ է որ մեծամասնական կառավարութիւնը իր կարմիր բանակով չէր կարող Բագուն ազատել Գարա-

*) «Արև» № 91



մարգեանի փախուստից յետոյ մանաւանդ՝ այլ եւս ոչ մի յոյս չէր կարելի դնել այն բանակի վրայ, որի զօրամասերը այլ եւս չէին գնում ռազմաբեմ, և եթէ գնում էին՝ քիչ յետոյ փախչում էին զանազան սուտ և ուղիղ պատճառաբանութիւններով:—

Կարգապահութեան անհրաժեշտութեան մասին իշխանութեան հրամաններն և նրա ռուս և հայ(*) օրգանների յորդորներն կորցրին իրանց նշանակութիւնը, և այլ եւս ոչ մի ազդեցութիւն չէին գործում զինուորականութեան վրայ:—

Աւելացրէք դրա վրայ՝ սովի ճիրաններում տառապող ազգաբնակութեան խուլ տրտունջը, աւելացրէք և մի քանի յայտնի գործարանների բանուորների մասնակի և հրապարակական բողոքները՝ իշխանութեան երբեմն չափազանց թուլութեան համար,—վերջապէս աւելացրէք և այն, որ մեծամասնական իշխանութեան մի քանի յայտնի գործիչներն (Սուխարցեվ) ահագին գումարներ վերցնելով անցան գնացին Ռուսաստան իբրև թէ արձակուրդով, միւսները՝ (Գաւտաւարձէ) մի երկու տասնեակ միլիօն դրամ

(*) Բացի կիսապաշտօնական «Արև»-ից, բոլշեւիկական իշխանութիւնը ունեցաւ և իր պաշտօնական հայ օրգանն եւս ունեցաւ «Տեղեկատու» — անունով:

վերցնելով՝ Գուրիա գնաց բոլշևիզմը կաշառքով այնտեղ տարածելու նպատակով, երրորդները (ֆինանսների մինիստր Կիրեեվը) մի խոշոր գումար գրպանելով շոգենաւ մտաւ փախչելու համար, և բռնւելով հրացանազարկ եղաւ և այլն այլն, — ապա այնուհետև ինքնըստինքեան հասկանալի է, որ բոլշևիքական իշխանութեան վերջն հասած է։

Այս ամէնը տեսնելով՝ բոլոր մնացած կուսակցութիւնները, — նրանց թւում, ի հարկէ, և Դաշնակցութիւնը, նաւատորմիղը և բանւորութեան մեծ մասը՝ բացարձակ պահանջում էին քաղաքն ազատելու համար՝ Էնզէլիում նստած Անգլիացիների աջակցութեանը դիմել։

Մեծամասնական իշխանութիւնը, որ ընդհանուր դրութեամբ արդէն լքած, յուսահատած էր՝ Անգլիացիներին հրաւիրելու մտքի դէմ ծառացաւ, աւելի լաւ համարելով Բագուն Թուրքերին տալ, քան Անգլիացիներին։

Սակայն երբ վերջիններիս հրաւիրելու միտքը՝ ընդհանուր ժողովում պաշտօնապէս անցաւ ձայների բազմութեամբ, — մեծամասնականները խմբովին իրանց հրաժարականը տւին և ժողովից հեռացան։ —

Իսկոյն Կասպեան նաւատորմիղի անդամներից դիկտատուրա, և երեք յայտնի կուսակ-



ցութիւններից (էսէրներից, փոքրամասնականներից և դաշնակցականներից) մի ժամանակաւոր գործադիր կոմիտէտ կազմւեց՝ իշխանութեան ղեկն իրենց ձեռքն առնելու, մինչև նոր ընտրութիւններ կատարելն։ —

Այս կոալիսիօն իշխանութեան առաջ գալը՝ մի րոպէ ոգևորեց կարմիր բանակին, որ սկսեց կենդանութեան նշաններ ցոյց տալ՝ սթափւեց, ոտքի կանգնեց և գոռ շարքերով առաջ շարժեց քաղաքին մօտեցած(*) թշնամւոյն յետ մղելու։ Եւ մղեց էլ։

Արդարութիւնը պահանջում է վկայել, որ քաղաքի այդ մի քանի օրւայ կրիտիքական միջոցին՝ բոլշևիկ Պետրով գնդապետը ծովափում դրած իր 4 մեծ թնդանօթներով անգնահատելի ծառայութիւն արաւ Բագուին։

Եւ մենք ճշմարտութեան դէմ մեղանչած չենք լինել, եթէ որ, առանց կարմիր բանակի խիզախութիւնն ու քաջութիւնը ժխտելու, մի և նոյն ժամանակ պնդենք, որ առանց Պետրովին՝ կարմիր բանակը հազիւ թէ կարողանար թշնամու յետ մղումը գլուխ հանել։ —

Պետրովից ոչ պակաս ծառայութիւն արաւ այդ միջոցին նա և գնդապետ Բիչերախովը իր ընտիր հեծելազօրքով։

*) Այդ բանից սարսափահար եղած՝ քաղաքացիների մեծ մասը՝ մանաւանդ կանայք ու երեխաներ վազ տւին դէպի նաւերը և մի քանի օր մնացին մինչև Թուրքերի յետմղւելն։

Այս մարդը մեծամասնական կառավարութենը, ըստ երեւոյթին, համոզել էր Պարսկաստանում եղած ժամանակ, որ ինքը իբրեւ թէ ընդունում է այդ իշխանութիւնը, որից յետոյ հրաւիրելով՝ կարմիր բանակի ընդհանուր հրամանատարութիւնը ընդունեց։

Բայց այդ բանակի վրա մեծ յոյս չդնելը մի յատուկ կոչով իր զօրամասը աւելացրեց 600 նոր ֆրոնտովիկ վարձովի զինւորներով։ Նրանց գլուխն անցած՝ Քիւրդամիւր ուղարկեց կարգադրելով, որ իրան աջ և ձախ կողմերով իրան հետեւի մեծամասնական զօրամասերը՝ մէկն՝ Սալիանի, միւսն՝ Շամախւոյ ուղղութեամբ։

Սակայն Գարամարգեանի մօտ Համազասպի բրիգադայի հետ պատահած կատաստրոֆի պատճառով՝ Բիչերախովը չկարողացաւ իր ծրագիրը իրագործել։ Եւ որովհետև Բագւից պահանջած օգնութիւնը էլ չ'ստացաւ, և միւս զօրամասերի նման, օդից ու սովից սատիկնեցւում էր, ուստի բանակի հրամանատարութիւնը իր օգնական Աւետիսեանին յանձնելով ինքը հիւսիսային Կովկասի ճամբան բռնեց։

Սակայն նախ քան այդ՝ Բագւին մօտե. Թուրքաց բանակի թիկունքն անցնելով. հարկադրեց նրան՝ հեռանալ քաղաքի մօտերից

Այսպէս ուրեմն Յուլիսի 31-ին Բագուն ազատեցին Թշնամուց Պետրովը, կարմիր բանակը և Բիչերախովը։

*) Бюллетень дикт. 1918 г. № 36

# ՑԱՆԿ

Երես


1. Տաճկահայութեան խաչը . . . . . . . . . . 1.
2. Ռուս դիւանագիտութեան նոր խաղը . . 4.
3. Դաշնակցական ջոջերի հին երգը . . . . . 5.
4. Ռուս միապետութեան տապալումը . . . . 6.
5. Խերն խրատը սերն սապոնը չի օգնել . . . 8.
6. Գեներալ Բագրատունի . . . . . . . . . 10.
7. Հայկական կորպուս . . . . . . . . . . 13.
8. Ազգային ժողով . . . . . . . . . . . . 14.
9. Ազգային ժողովի կոչը . . . . . . . . . 16.
10. Հայաստանի պաշտպանութեան խորհրդի կոչը 19.
11. Անդրանիկի և Դոլուխանեանի կոչը . . . . 22.
12. Անդրանիկի նոր կոչը . . . . . . . . . 24.
13. Վրացիները . . . . . . . . . . . . . 25.
14. Թաթարները . . . . . . . . . . . . . 32.
15. Բագրատունին Բագւում . . . . . . . . 35.
16. Մուսաւաթ . . . . . . . . . . . . . . 38.
17. Բագուի քաղաքացիական կռիւը . . . . . . 42.
18. Հայոց Ազգային Խորհրդի չէզոքութիւնը . . 46.
19. Հ. Յ. Դաշնակցութեան արկածախնդրութիւնը 48.
20. Թաթարների կորուստը . . . . . . . . . 53.
21. Ռուս դիւանագ. հին խաղի շարունակութեանը 57.
22. Մեծամասնականութեան տարածումը . . 61.
23. Շամախւոյ դէպքերը . . . . . . . . . . 67.
24. Թուրք և Հայ յարաբերութեան լարումը . . 72.
25. Շամախեցի հայ զինւորների վերադարձը . . 78.
26. Շամախւոյ թուրքերի յուզումը . . . . . . 78.
27. Արտամանովի խոստմնազանցութիւնը . . . 82.
28. Շամախւոյ հայերի կոտորածը . . . . . . 87.
29. Թուրքերի նոր կոտորածը . . . . . . . . 90.
30. Անդրկովկասեան Սէյմի արձակումը . . . . 94.
31. Հայ-տաճկական հաշտութիւնը . . . . . . 96.
32. Նոր արկածախնդրութիւն . . . . . . . . 106.
33. Յաղթական արշաւ . . . . . . . . . . 108.
34. Կարմիր բանակը . . . . . . . . . . . 113.
35. Քո բերանով քեզ դատեցիր . . . . . . . 116.

## ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Չէնխաթ—դէնխաթ.
2. Գլխագին.
3. Ապօրինի զաւակը.
4. Գինեզև.
5. Րաֆֆիի «Կայծերը»։
6. Կացինը քարին կպաւ.
7. Ռուս Բիւրօկրատիան և Հայերը.
8. Պատմական քաղուածներ Ա. պրակ.
9. Պատմական քաղուածներ Բ. —
10. Պատմական քաղուածներ Գ. —
11. Պատմական քաղուածներ Դ. —
12. Պատմական քաղուածներ Ե. —
13. Պատմական քաղուածներ Զ. —
14. Պատմական քաղուածներ Է. —
15. Պատմական քաղուածներ Ը. —
16. Պատմական քաղուածներ Թ. —
17. Պատմական քաղուածներ Ժ. —
18. Հայկական հարցի առաջին շրջանը
19. Հայկական հարցի երկրորդ —
20. Հայկական հարցի երրորդ —
21. Հայկական հարցի չորրորդ —
22. Հայկական հարցի հինգերորդ —
23. Հայկական հարցի վեցերորդ —
24. Հայկական հարցի եօթներորդ —
25. Հայկական հարցի ութերորդ —
26. Ցաճիկ քահանաներին.
27. Պատմութեան դասերը
28. Հրապարակախօսական մանրունք Ա. պրակ.
29. Պատմական զրոյցներ Ա. պրակ.
30. Տաճիկները Կովկ. և Բագւի անկումը Ա. պրակ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0418287